ԳԻՐՔ XLVIII

ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ ԵՒ ՀԱՆՐԱՅԻՆ

ԱՄՍԱԳԻՐ

ՏԱՍՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

1908 № 2 ՓԵՏՐՈՒԱՐ

ԹԻՖԼԻՍ

ԷԼԷՔՏՐԱՇԱՐԺ ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆ ՊՕԼԻՑ. 7.

1908

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կովկասի փոխարքայի 50-ամեայ յոբելեան 5
Թիֆլիսի Հայերի պատգամաւորութիւնն և ուղերձը փոխարքային 7
Պետեօֆի. Փառաւոր մահ. թարգմ. Գէորգ Բարխուդարեանց . 9
Արեան վրէժ. Քաջբերունի 11
Դև. Մ. Ենգիբարեան 26
Երազեալ ոսկեդար. Մինաս Բերբերեան 27
Սայադիի Գիւլստանից Պարսկ. Թ. Մ. Վ. Մաքսուտեանց . . 38
Տ Գաբրիէլ Պատկանեանց Երուանդ Շահազիզ 49
Միջազգային պանթէոն.—1. Հենրիխ Հիւբշման։—2. Ալէքսանդր Իվ. Զուպրով,—3. Ա. Էրտէլ։—4. Է. դէ—Ամիչիս։—5. Կարլ Մարքս։ Վ. Ա. 56
**-ին. Ա. Տ.-Գ. 60

ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ

1. Անգլիայի պետական կազմը և քաղաքական կուսակցութիւնները Մ. Բարխուդարեանի։ 2. Պոշեան և նրա գործունէութեան արժէքը. Աւ. Տէր-Յարութիւնեանի։ 3. Ամենուն տարեցոյցը. Վ. և Ն. Տէր-Ներսիսեանների։—Գրագէտ. 61

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մինաս Բերբերեան. — Բժ. Տէր-Յարութիւնեանի կտակը.—տ. Հրաչեայի երկասիրութիւնը.—Սխալ լուր Հ. Մկրեանի մասին.—Կարապետ Կոստանեանց.—Յուսիկ վ.-ի բողոքը.—Ա. Յովհաննիսեանի մահարձան.— Նամակ խմբագրութեան.—Հայրենիք» շաբաթաթերթ.—«Լումայ» նուիրողներ. — Դարձեալ «Նոր-Դար»-ի 25-ամեակի մասին։— 63
ՍՏԱՑՈՒԱԾ ԳՐՔԵՐ 70
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԳԻՐՔ XLVIII



ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ ԵՒ ՀԱՆՐԱՅԻՆ

ԱՄՍԱԳԻՐ

ՏԱՍՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

1908 № 2 ՓԵՏՐՈՒԱՐ

ԹԻՖԼԻՍ

ԻԼԷՔՏՐԱՇԱՐԺ ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆ ՊՕԼԻՍ. 7.

1908

ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ

ԿՈՎԿԱՍԻ ՓՈԽԱՐՔԱՅ

ԿՈՒՄԱ ԻԼԱՐԻՈՆ ԻՎԱՆՈՎԻՉ ՎԱՐԱՆՑՈՎ–ԴԱՇԿՈՎ

ՄԱՔՍԻՄԻԼԻԱՆ ՄԱՔՍԱԳԱՍԵՐԻ ՄԵԳՈՒՄ
ԳԱՅԱՍՈՒՈՒԿ ՎԱՍՄԵՔԻՈՒ
ԽՈՐՀՈՒՐԴԸ–ԽՈՒՏՈՒՄԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԱՅՍՈՒՄ

ԿՈՎԿԱՍԻ Ն. Կ. Մ. ՓՈԽԱՐՔԱՅ

ԿՈՄՍ ԻԼԱՐԻՈՆ ԻՎԱՆՈՎԻՉ

ՎՕՐՕՆՑՈՎ—ԴԱՇԿՈՎԻ

50-ԱՄԵԱՅ ՅՕԲԵԼԵԱՆ

—

Մարտի 25-ին լրանում է Կովկասեան փոխարքայ Կոմս Ի. Ի. ՎօրՕնցով-Դաշկովի զինուորական ծառայութեան յիսնամեայ Յօբելեանը և այդ օրը մեծ հանդիսով տօնում են ամբողջ Կովկասի բոլոր ազգութիւնները, որոնք իրանց ներկայացուցիչների միջոցով շնորհաւորութիւններ պիտի մատուցանեն բարձրաստիճան Յօբելեարին։

Կոմսը Պետերբուրգի նահանգի ազնուական ծագումից է և ծնուել է 1837 թուի մայիսի 27-ին. իւր ուսումը ստացել Մոսկուայի համալսարանում, որ աւարտելուց յետոյ 1856 ին մտել է զինուորական ծառայութիւն, 1858-ին մարտի 8-ին ստացել է օֆիցէրի առաջին աստիճանը և հէնց հետևեալ տարին ուղարկուել է Կովկաս գէն. Բարեատինսկու մօտ ծառայութեան։ Այնուհետև նա վարել է զինուորական բազմաթիւ պաշտօններ. իսկ 1905 թուի փետրուարի 16-ին բարձրագոյնս հաստատուել է նորին Մեծութեան Փոխարքայ Կովկասում, որ իսկապէս հետաքրքրական է յատկապէս մեզ հայերիս համար։

Գալիցինի և իւր նախորդների վերաբերմունքը դէպի Կովկասեան հպատակ ազգութիւնները և առանձնապէս հայերը յայտնի է ամենքին, այդ մեզ համար սարսափելի

կուսակալից յետոյ կոմս Վարանցով-Դաշկովի նման լուսամիտ, խաղաղարար և հայրական սիրով լցուած մի անձի երևալը մանաւանդ հայերիս վերաբերմամբ ուղղակի մի օազիս էր անապատի մէջ։

Մեր խօսքերը կհասկանան նոքա, որոնք մի բոպէ կյիշեն այն դժբաղդ և սոսկալի ժամանակը, երբ հայ անուն ասելն ու լսելը նոյն իսկ վտանգաւոր էր թէ ասողի և թէ լսողի համար և երբ հայ եկեղեցական գոյքերի գրաւումից յետոյ հայոց դէմ հանած հալածանքը գագաթնակէտին էր հասել։

Կոմս Փոխարքայի հայրական խնամքն էր, որ ոչ միայն վերադարձրեց մեզ մեր կալուածները, այլ և ընդարձակեց մեր դպրոցների ու բարեգործական ընկերութեան սահմանափակած իրաւունքները և նորա օրօք թոյլ տրուեցան նորանոր կուլտուրական հաստատութիւններ հայերիս մէջ Թիֆլիսում և կովկասեան ամեն վայրերում։

Կարծում ենք, որ Հայ ազգը միշտ երախտագիտութեամբ պարտական է յիշատակել Կոմսին և մարդասիրական գործունէութեան մէջ իւր անբաժան ընկեր Կոմսուհուն։

Թեմիս ս. Առաջնորդ Գարեգին արքեպիսկոպոսը ցանկալով, որ Թիֆլիսի. բոլոր հայ հաստատութիւնները ի նշան երախտագիտութեան մասնակցեն Փոխարքայի 50-ամեայ յոբելեանին և նոցա բոլոր ներկայացուցիչները իւր հետ միանին պալատ գնան՝ շնորհաւորելու մի ընդհանուր ուղերձով՝ առաջնորդարանում ժողովներ գումարեց այդ առթիւ, ուր մասնակցելու յօժարութիւն յայտնեցին հետևեալ հաստատութիւնները իրանց ներկայացուցիչներով. 1. Հայոց կոնսիստորիայն, 2. Հայ հոգևորական դասը 3. սոցա ապահովութեան Գանձարանը, 4. Ղուկասեան թանգարանի վարչութիւնը, 5. Հայուհեաց բարեգ. ընկերութիւնը, 6. Ներսիսեան հոգևոր դպրոցը, 7. Յովհաննեան օր. ուսումնարանը, 8. Որբախնամ ընկերութեան վարչու-

թիւնը, 9. «Մեղու» ընկերութեան վարչութիւնը, 10. Տաճկահայոց օգնող մասնաժողովը, 11. Նպաստամատոյց Յանձնաժողովը, 12. Հայոց ազգագրական ընկերութիւնը, 13. Ցնայնագործական ընկերութիւնը. 14. Դրամատիքական ընկերութիւնը, 15. Ծխական ուսուցիչների հոգաբարձութիւնները, 16. երեցփոխանների խումբը, 17. Լոյս ընկերութիւնը։

—

Այս բոլոր ընկերութիւնների և հաստատութիւնների ներկայացուցիչները ս. թեմական Գարեգին Արքեպիսկոպոսի առաջնորդութեամբ ամսոյս 25-ին, յօբելեանի օրը պիտի մատուցանեն յօբելեարին մի ուղերձ, որի բնագիրը ռուսերէն թարգմանութեամբ, դրուած է մի հոյակապ կազմի մէջ։

Առաջ ենք բերում ուղերձի հայ բնագիրն ամբողջութեամբ։

—

ՊԱԾԱՌԱՓԱՅԼ ՏԷՐ,

ԿՈՄՍ ԻԼԼԱՐԻՈՆ ԻՎԱՆՈՎԻՉ

Յայսմ աւուր լրման յիսնամեկի պաշտաման Պայծառափայլութեան Ձերոյ ի շարս պանծալի զինուորութեան Ռուսիոյ առաջակայքս եկեղեցական, բարեգործական, դպրոցական և կրթական հաստատութեանց Հայոց պարտիս վարկանիմք մատուցանել Ձեզ զՁերմաջերմ իղձս մերոյ խնդութեան, մաղթելով Ձեզ աւուրս ընդ երկար վաստակոց արգասաւորաց յօգուտ մեծի Հայրենեաց մերոց։ Ի մեծահանդէս աւուրս չիք հնար՝ եթէ չյիշիցեմք խորին երախտագիտութեամբ զկոչումն բարձր, զոր յանձին կալայք յօրէ անտի ձեռնամուխ լինելոյ Ձեր ի կառավարութիւն կողմանցս Կովկասու։ Նրբազգաց և մարդասիրական ոգւով Ձերով ծանեաք Դուք զաղբերս վշտի եկեղեցւոյն և ժողովրդեանն Հայոց, և ոչ անխայեցէք յամե-

նայն ջան և ի զօրութիւն Ձեր՝ առ ի մեղմել ամոքել զտրտմութիւն վշտին և զարձուցանել անդրէն ի Հայաստ ոչ միայն զբնիկ աւանդս մեր, այլ և զվաղեմի վստահութիւնն ի մեզ զՊետութեան Ռուսիոյ։ Եւ անուն Ձեր, փառաւորեալ ճաճանչիւք սիրոյ և մարդասիրութեան, կեցցէ յաւէտ յերախտագէտ միտս ժողովրդեանն Հայոց։ Ի նշանակ այսր երախտագիտութեան մեք սահմանեցաք՝ զարդարել զդահլիճ տանն առաջնորդարանին Հայոց ի Տփխիս կենդանագիր պատկերք Ձերովդ և ամենամեծարոյ ամուսնոյն Ձերոյ, կոմսուհւոյն Էլիսաւետայ Անդրէեվնային զում գակցին Ձերոյ ի գործս մարդասիրութեան։ Յուշ արասցեն նոքին ամենեցուն, որք մտանիցեն ի տուն անդր ժողովրդեան Հայոց, զփառաւորեալ անուանս Պայծառափայլութեանց Ձերոց, անյողդողդ հովանաւորացդ ամենայն ազանց, որք բնակեալ են ի բազմազգի երկրիս Կովկասու։

—

Ը. Առաջնորդը բացի այդ կարգադրութիւնից, հեռագրով պատուիրել է Թիֆլիսի թեմի բոլոր հայ ծխական-հոգևոր դպրոցների վարչութիւններին մարտի 25-ին մի օրով դադարեցնել ուսումը բոլոր դպրոցներում, նոյն կարգադրութիւնն արել է նաև Թիֆլիսի բոլոր հայ ուսումնարանների վերաբերութեամբ։

[redacted]

ՊԵՏԵՕՖԻ*)

ՓԱՌԱՒՈՐ ՄԱՀ

Միայն մէ՛կ միաք տանջում է ինձ ու մաշում,
Որ պիտ, մեռնեմ բարձերի վրայ անկողնում,
Թառամելով, ինչպէս ծաղիկ յուսահատ,
Որի արմատը կրծում է մի որդ վատ.
Կամ, ինչպէս մոմ, հանգչեմ կամաց հալուելով,
Մենակ դատարկ սենեակի մէջ վառուելով։

Այդպիսի մահ չտաս դու ինձ, ով երկինք,
Այդպիսի մահ, որ ամօթ է, նախատի՛նք.
Թո՛ղ ես լինիմ ծառ խորտակուած կայծակից,
Կամ թէ հոլտում արմատախիլ մրրկից,
Եւ կամ մի ժայռ, որ գագաթից մեծ լերան
Որոտալով գլորվում է խոր դերեղման։

Երբ ամէն մի սարուկ ժողովուրդ ծանծրացած
Լծից, մի օր կռիւ դուրս կրդայ լաւ զինուած,
Դէմքը կարմիր, ձեռին դրօշակը կարմիր,
Նրա վրայ փայլի այս նշանը ոսկեգիր.

---

*) ԱԼԷՔՍԱՆԴՐ ՊԵՏԵՕՖԻ, Հունգարացոյ ամենամեծ քնարերգու բանաստեղծը ծնուել է 1823 թ. յունուարի 1-ին։ Իբրև ջերմ և ոգևորուած հայրենասէր, նա, ի հարկէ, չէր կարող անտարբեր վրայ լինել և չմասնակցել Հունգարացոց 1849 թ. մեծ ապստամբութեանը Աւստրիայի դէմ, և մտաւ ազգային զօրքի մէջ, քաջութեամբ կռուելով իւր հայրենիքի թշնամիների դէմ։ Բայց նոյն թուականի յուլիսի 31-ին, մի արիւնահեղ ճակատամարտից յետոյ, 25 տարեկան ծաղկափթիթ հասակում, յանկարծ անյայտացաւ նա—ոչ սպանուածների մէջ գտնուեցաւ, ոչ էլ գերի ընկածների մէջ։ Ծ. Թ.

«Ազատութիւն»

Եւ ամէն տեղ բարձրածայն
Հնչէ այս կոչը միայն,
Եւ բռնութեան դէմ կռիւ
Մղեն քաջեր բաղմաթիւ.
Ա՛յնտեղ կուզէի ընկնել,
Մատաղ արիւնս թափել:
Վերջին խօսքս խեղդեն թող
Պատերազմի ուժգին փող,
Եւ սրերի շառաչիւն,
Եւ հրազէնքի խուլ թնդիւն:
Եւ թող անեն ոտի տակ
Երիվարներն իմ դիակ
Երբ քաջերը յաղթութեան
Լուրը տանել կը փութան:
Թող, մինչ յաղթէ հալածուած
Իրաւունքը, ճնամ ընկած,
Եւ այն ժամանակ միայն
Ոսկոռներս ժողովեն,
Երբ որ ընդհանուր թաղման
Օրն առաջուց կորոշեն.
Մեծ օրը, երբ հանդէսով,
Ցխրանուագ երգերով,
Եւ դրօշակը փաթաթած
Առաջ շարժուում է կամաց
Թաղման թափորը սխուր,
Որ իջեցնեն ընդհանուր
Մէկ դերեզման միասին
Բոլոր այն հերոսներին,
Որոնք քեզ համար մեռան,
Ազատութի՛ւն սրբազան:

Թարգմ. Գէորգ Բարխուդարեանց

ԱՐԵԱՆ ՎՐԷԺ

Վաղուց, շատ վաղուց, աւելի քան 25—26 տարի առաջ արդէն Թողել հեռացել էի Դարաչադեազից և տակաւ առ տակաւ մոռացութեան էի տալիս այդ հետաքրքրական լեռնոտ անկիւնը, որ անցեալ 1905 արիւնոտ Թուականի հայ-Թրքական դէպքերը նորից երևակայութեամբ տեղափոխեցին ինձ այդ երկիրը, նորից պատկերացրին առաջս այն ժայռոտ լեռնաշղթաներն իւրեանց գետակներով, վտակներով ու գետափնեայ ծառաստաններով, լանջերից հոսող, ժայռերից Թափուող սառնորակ աղբիւրներով, ձորերի, հովիտների ու լեռնային լանջերի վերայ ցիր ու ցան, խառն ի խուռն ընկած հայ ու Թուրք գիւղերով, մի խօսքով՝ ամբողջ Դարաչագեազը ինձ ի մօտոյ քաջաժանօթ մի երկիր, որ այնքան էլ անհետանալ շուտ չէր կարող ոչ իմ մտքից, ոչ սրտից։

Ես մտաբերեցի այն երջանիկ անց ու անցած անդառնալի ժամանակները, երբ, իբրև պետական ծառայող, հիւրընկալւում և հիւրասիրւում էի միահաւասար և հայ ու Թուրք գիւղերում, երբ ինձ ուղեկցում էին և հայ ու Թուրք բնակիչներ, սրտաբաց պատմում էին և հաղորդում ամեն տեսակ նիւթեր և իրողութիւններ ու անցքեր, որոնք այնքան կարևոր և նպաստաւոր էին իմ «Ճանապարհորդական նկատողութիւնք» աշխատութիւնը կազմելու համար։ Տեսնում էի Թէ ինչպէս ապրում էին խաղաղ դրացիութեամբ, անվրդով հարևանութեամբ և հայ և Թուրք ազգաբնակութիւնները և ապրում էին ոչ միայն առանձին գիւղերում, այլ և խառն, մի և նոյն գիւղի մէջ, դուռը դռան կից, պատը պատին կից, որպիսիքն են

Հէրհէր, Գնդեվազ, Աղ-Խաչ, Օղբին, Ջահրի և այլ գիւղեր։

Եթէ այդ այդպէս է, հապա որքան գարշելի, որքան չարանենգ հոգիներ պէտք է լինէին, որոնք կարողացան 1905 թուին թշնամի դարձնել, աւարի, ոխակալութեան և սպանման համար իրար դէմ կանգնեցնել գաղանացած ողևորութեամբ երկու դրացի բարեացակամ ազգեր։

Երբ Դարպագեազից հարիւրաւոր վերստ հեռու, փոշոտ, մրոտ, ծիոտ Բագուում կաշկանդուած, կարդում էի անցեալ տարու լրագիրներում, թէ ինչպէս Ի թ Ղռան գիւղի և միւս դրացի թուրք գիւղերի բնակիչները գաղանաբար յարձակուել են հարևան հայ գիւղերի վերայ ու աւերել՝ տարել են ամէն բան և թէ ինչպէս ամիսաղան-ըսրաղան բարեկամ դրնջի հայերը վրէժխնդրութեամբ յարձակուել են Ի թ-ղռան գիւղի վերայ և քարը քարի վերայ չէն թողել, այդ սարսափների սարսուռութեան տակ՝ ես ակամայ պատկերացնում էի առաջս Ի թ-ղռան գիւղը, նորա ծորերն ու ծառերը, նորա փոքրիկ կանաչոտ բլուրն, որի գլխին, ծառերի սաւերում, 25—26 տարի առաջ շրջակայութեանս միջոցին հանգիստ էի առնում շրջապատուած մորուսաւոր և անմորուս թուրքերով, որոնք մի մի մօտենալով, գաւազանը՝ իբրև նշան յարդանաց՝ ձեռքից ձգում էին և խորը գլուխ խոնարհեցնելով արտասանում էին «խոշ գելդիբսրդ» (բարով էք եկել)։ Ապա ծպտապատիկ նստում էին շրջապատ և պատմում էին գիւղական հասարակաց չար ու բարիի մասին։

Մտաբերում էի և միւս հարևան թուրք գիւղերը՝ Բըզգով, Գեարմա-չաթախ և այլ գիւղեր։ Մտաբերում էի թէ որքան յարգում էին դրացի հայերին, որ իւրեանց հասարակաց ազգի առաջն առնելու համար անդամ դիմում էին հայ ազգեցիկ մարդկանց օգնութեան ու միջնորդութեան և միշտ վայելում վերջինների ծառայութիւնն ու պատրաստակամութիւնը։

Ահա այս մտքերի մէջ օրօրում էի, երբ յաջորդաբար միտքս ընկաւ մի նշանաւոր դէպք, մի արիւնահեղ անցք, որ թշնամացրել էր իրար երկու հարևան թուրք գիւղեր, Բըզգով Գեարմա-չաթախ այն ատաիճանի, որ երկուսն էլ ատ-

բինների ընթացքում դիտմամբ աշխատում էին իրար արիւն թափել, մտհուամբ վրիժառու լինել։

Այդ հին, անցած մոռացուած դէպքն այնպիսի վառ գոյներով նկարուեց երևակայութեանս մէջ, որ ես կամեցայ նկարագրել այդ յետամնաց, կիսավայրենի ժողովրդի հասարակաց վարքի ու բարքի մի հետաքրքրական պատկեր, պատկեր՝ որ կենդանութեան առաջին անգամն էի տեսնում և ցոյց տամ թէ այդ դարևոր սովորութեան խստութիւնը մեղմացնելու նպատակով ինչ դեր է կատարել հայ մարդը, հայ դրացին։

Դարտագեազի լեռնագօտին հարաւային լանջում ապահանապար ցածանալով կազմում է ձորեր, ուր միջին դարերում զետեղուած էին երեք կից փոքր գաւառներ, Շահապոն՝ այժմ Շահբուղ, Ճահուկ՝ այժմ Ջահրի և Նախիջեւան։ Շահբուղը հիւսիսային կողմից միանում էր Վայոց ձորի հետ, այժմ Դարտագեազից Նախիջևան տանող հպատակաց ճանապարհն անցնում է Շահբուղով և Ջահրիով։ Շահբուղ ձորի հիւսիսային մասում՝ այդ գիւղերի շարքում դրած են երեք հարևան գիւղեր, Ոլթ-ղուան, Բրզզով և Գեարմա-չաթախ, երեքն էլ թբրդ քարնակ, բայց շինած հայկական աւերակների վերայ։ Երեքի հոգաբաժիններն էլ կտած են միմեանց։

Գեարմաչաթախի և Բրզզովի հոգաբաժինների սահմանագծում մի անգամ վէճ ծագեց, հողային վէճ։ Վէճը գիւղերում հանգիստ խորհրդածութեան և միջնորդների դատավճռի առարկայ չէ դառնում, այլ վճռւում է ուժով։ դանակոծութեամբ, հրացանածգութեամբ, մարդասպանութեամբ և այլն, և այդպիսի վիճերին խառնուած են երկու վիճող հասարակութիւնների բոլոր՝ մեծ և փոքր անդամները, մինչև անգամ կանայք, երեխայք, որոնք մեծերին հասցնում են ձեռափայտ, սուր, հրացան և այլ մտհացու գործիքներ։

Եւ ահա վէճի պատճառ ծածկուեց գեարմաչաթախցիների ու բրզզովցիների ահագին բազմութիւնով, որ կարծես երկու դիւգերումն էլ այլ ևս ոչ ոք չէ մնացել, ամենքն էլ թափուել են այդ տեղ։ Վէճը դեռ ևս խօսքերով էր լինում, մարդիկ իրար խառնուած դադարկում էին, ձեռքերի շարժումով օդի մէջ կամ

հողի վերայ ինչ որ բաներ էին ցոյց տալիս, գլուխները պըտրտեցնում էին, միմեանց առաջկտրուկ էին անում, իւրեանց իրաւունքն ու արդարութիւնն էին ցոյց տալիս, ամենքն էլ խօսում, աղաղակում, վիճում էին; ոչ ոք չէր լսում, միայն աղաղակում էր և լսելու անգամ ժամանակ չկար, սակայն թըւում էր թէ իւրաքանչիւր վիճող հաւատացած էր, որ իւր խօսքերն ու դատը լսում են ամենքն էլ։

Քանի գնաց կռիւը խստացաւ, աղաղակը բարձրացաւ, իրար ձեռքից բռնում քաշում էին, փէշերից ծգում էին, մի խօսքով երևում էր որ վէճը հանդարտութեամբ չէր վերջանալու, աւելի սպառնալի կերպարանք էր ընդունում. մի մարդ չսիր էր ճնացել, որ կատաղի ամբոխը ցոյց տայ իւր ոյժը։ Այդպէս էլ եղաւ... Մի քար օդը ճեղքելով անցաւ, ազդանշանը տրուեց, ով էր սկզբնապատճառը, առաջին քար դցողը, անմիտ ու վատանդաւոր արարքի հեղինակը... այդ միայն Աստուած գիտէ։ Միայն այսքանը յայտնի եղաւ, որ այդ չարաբաստիկ քարի երևալը բաւական էր երկու կողմի համար էլ, որ քարակարկուտ տեղայ ամէնի դլխին... և օդի մէջ՝ աչ ու ձախ՝ թափուում էին քարեր, որ առատութեամբ կարելի էր ձեռք բերել քարքարոտ դաշտում։ Այդ ևս հետևանքի մասին մտածող չկար; կորաւ բանականութիւնը, երես ու դլուխ, քիթ ու բերան, աչք ու ականջ այլ ևս հսրցնող չկար, քարերի առաջ ամէն բան հաւասար էր։

— Եւ ահա Շէյթանի ոներևոյթ կարգադրութեամբ մի արդամարդի դանդի ոսկրները փշրուեցին ու զոհը տեղն ի տեղը դիակ դարձած ծդուեց Պաշտի վրայ։ Դա քեռորդայ Քեռոդումի որդի քեռորդայ Զէյնալ Աբդինն էր՝ Բրդդով դիւղի իրնակիչ։

Ո՞վ էր զարկողը, քանի ձեռքից քար դիպնու, պատահմամբ էր թէ դիտմամբ, զարկողը հանդուդեակի համարձակացի էր թէ Գեարմաչաթեցի, ոչ ոք չդիտէր ու դիտենալն էլ աւելորդ էր և գործի էութեան համար անպէտք, բսա որում բաւական է որ մահացողը Բրդդովցի էր, ուրեմն յանցանքն անմիջապէս ընկնում է Գեարմաչաթցիների ներողջ հասարակու-

թեան վերայ և այդ սև բոպէից երկու հարեան դրացիները ամբողջ հասարակութեամբ դարձան իրար վրիժառու թշնամիներ։

Սրանից յետոյ երկու գիւղերի մէջ արդէն կորան անհետացան մարդասիրական, բարեկամական զգացումներն, որոնց փոխարէն յառաջ եկան վրէժխնդրութեան, սպանութեան, արիւնհեղութեան վատթարագոյն զգացումները։ Ուր և լինի, երբ և լինի, թէկուզ անցնեն տարիներ, տասնեակ տարիներ, ամեն մի բզդովցի, մանուանդ սպանուած քեարբալայ Զէյնալ աբդինի ազգականներից, աշխատելու է փոխարէնն սպանել մի որևէ գեարմաթաչախցի, թէկուզ մի անմեղ հոգի, ըստ որում քանի որ փոխարէն արիւնը չէ թափուած, քանի որ թշնամի գեարմաչաթախցիների կողմից մինը կամ միւսը կեանքից ուժով չէ զրկուած, Զէյնալ Աբդինի հոգին հանգերձեալ աշխարհում հանգիստ ու դադար ունենալ չէ կարող, նա պէտք է միշտ յետ նայի, միշտ սպասի, միշտ տանջուի ու չարչարուի, թէ իւր արեան փոխարէն ե՞րբ պէտք է արիւն թափուի... Այսպէս է Մահմատի կրօնակիցների վրիժառական զգացումը, համոզումը, դատափարը։

Հէնց որ մինի արիւնը հոսեց, մարմինն անշնչացաւ, այդ փսյրկեանից Զէյնալ Աբդինի արիւնածարաւ հոգին դադար կառնի, տանջանքին վերջ կդնի։ Սակայն դորանով բանը չի վերջանալ, նոր զոհի հոգին նոյնը կպահանջի, նա կտանջուի, կչարչարուի, հանդստութիւն կորոնի նոր արեան մէջ... և այդ հանդստութիւնը ձեռք բերելու համար՝ գեարմաչաթախցիք առանց այլ և այլութեան պարտաւոր են անշնչացնել մի բզդովցի, որից յետոյ հերթը կանցնի բզդովցիներին... և այսպէս փոխադարձաբար և անվերջ ոճիր... արիւն... մահ, մահ և մահ... մինչև երկու թշնամի բանակները հաշտութեան ձեռք մեկնեն իրար, մոռացութեան տան անցեալն ու ապրեն բարեկամաբար։

Բայց այդ հաշտութիւնը պլտվս բերել, յաջողեցնելը շատ դժուարին գործ է և շատ անդամ պահանջում է բարձր դիրք ունեցող և վստահութիւն ներշնչող անհատների միջնորդու-

թիւնը։ Թուրքերի մէջ վրէժխնդրական թշնամութիւնը ծագում է ոչ միայն երկու հասարակութիւնների մէջ, այլ նաև երկու զարմի մէջ, երկու դերդաստանի մէջ և հետևանքը նոյնն է. նոյնն են և հաշտութեան միջոցները։ Ես դիտեմ երկու թշնամացած դիւղ, որ կարճատև ժամանակամիջոցում փոխադարձ զոհերի թիւը հասցրել են եօթի, մինչև վերջապէս խաների բէկերի ու ախուանդների միահամուռ միջամտութիւնը կարողացել է վերջ դնել այդ վրիժառութեան, որ հին դարերից մնացած ժառանգութեան հետևանքն է։

Դառնամ կրկին քեարբալայ Զէյնալ արդինի անշնչացած մարմնին։ Նա մահացաւ թէ չէ՝ գազանացած, գլուխը կորցրած ամբոխի մէջ մի փոփոխութիւն նշմարուեց։ Գեարմաչաթախցիք լռեցին, յետ քաշուեցին, կարծես հաչկացան իւրեանց տարածան։ Բրզդովցիք չհալածեցին նրանց, իսկոյն վերջացրին վէնը և իսկոյն խմբուեցին իւրեանց հանգուցեալի շուրջը։ Սկսուեց սուգ ու շիւանը՝ փայնատանն ու կոչը։ Կանայք գլուխները բացին, մազերը գզգզեցին, երեսներն սկսեցին եղունկներով ամրիւնոտել, կրծքները ծեռքով ծեծել և խմբովին ծայնել «Հասան, Հիւսէին»։ Ոմանք տղամարդիկ գլուխները դիակը տեղափոխելու հարցով։

Անտառում կտրած երկու ծողի վերայ կապերտից շինեցին դագաղ և չորս մարդկանց ուսերի վերայ հանգուցեալին տեղափոխեցին դիւղ։ Նորան հետևում էին Բրզդովի բոլոր ժողովուրդը, որ մի ժամ առաջ կատաղութեամբ դուրս էր եկել պաշտպանելու համար։ Վերջացաւ դիւղերի բարեացակամ յարաբերութիւնը։ Բրզդովցիներն աշխատում էին զոհը տանել, իսկ գեարմաչաթախցիք հնարներ էին որոնում չհանդիպեն, զգուշանան և զոհ չտան Բրզդովցիներին։

Գեարմաչաթախցիք հոգում էին դիվանի մասին, պօլիցիական իշխանութիւնը պէտք է գար, քննէր անցքի էութիւնը, պէտք է օրինական ընթացք տար, ուստի Գեարմաչաթախի հասարակութիւնն իւր առաջնորդների ծեռքով պէտք է ընդունէր իշխանաւորին կարևոր պատրաստութեամբ... սրբատաշահ նպատակաստութեամբ... դատարկ ծեռքով ներկայանալ

պոլիցիական իշխանութեանն և անդորձնական է և ապարդիւն... և մանաւանդ անվայել է... չէ՞ որ քրէական գործերում պոլիցիական իշխանաւորը քննութեան նախաղուն է և այդ դրնից է կախուած՝ թէ նա ո՞ր ճանապարհով կատանի գործը... Հեռատես և փորձուած Գեարմաչաթախցիք այդ շատ լաւ գիտէին, բայց գիտեն և այլ դիւղացիք ամենուրեք։

Եկաւ մի քանի օրից յետոյ տեղական պոլիցիական իշխանաւորը, նախ և առաջ նա դնաց Բրզդով, սրտները շահեց, ցաւակցութիւն յայտնեց՝ որ նոյնն էր թէ սպառնալիք կարդաց գեարմաչաթախցիներին, որից քաջալերուած Բրզդովցիները հաւատի էին, որ իւրեանց թշնամիներն, որպէս մարդասպան, նախ կատանջուեն Նախիջևանի և Երևանի բանտերում ու ապա Սիբիրի խորքերում...

Պոլիցիականը Գեարմաչաթային էլ այցելեց, որի աղսախկալները (սպիտակամրուսները—պատուաւորները) գործ դրին սրտաշահ քաղաքականութիւնը...։ Երբ պոլիցիականն արտասանեց հետևեալ խօսքերը «հասարակաց կռիւ է... դժուար է, մինչև անգամ անկարելի է իմանալ իսկական անողին... օրէնքը թոյլ է տալիս... խոմ չէ՞ կարելի ամբողջ հասարակութիւնը դատի ենթարկել...» աղսախկալներն իսկոյն մատները կծեցին հասկացան գործի ընթացքն և գլխի ընկան, որ իսկական արդարութիւնն իւրեանց կողմն է և որ դիվանը գնում է ամենաարդար ճանապարհով, ուստի այս կողմից ապահով լինելով, նորանք կենտրոնացան միայն մի մտքի վերայ թէ այսուհետև բանեցնեն այնպիսի մեծ զգուշութիւն, որ չլինի թէ զոհ տան բրզդովցիներին, մանաւանդ բրզդովցիները թուով աւելի շատ էին, 29 ծուխ, 132 արու և 116 էգ, ընդամենը 248 հոգի, իսկ գեարմաչաթախցիք—13 ծուխ, 79 արու 52 էգ, ընդամենը 131 հոգի։

Գեարմաչաթախցիք անտանելի հանգամանքների մէջ էին։ Նոքա այլ ևս չէին վստահանում միայնակ դուրս գալ իւրեանց անդը կամ հեռանալ գիւղից, կամ գնալ մի այլ գիւղ կամ քաղաք։ Գնացողներն ենթարկւում էին թրի, սրի, հրացանի և այլն։ Այս պաշարուած դրութիւնը շարունակուեց չորս տարի։

Հասարակութեան փորձառու և առաջաւոր անդամներն աշխատում էին մի երք գտնել պաշարման դրութիւնից դուրս գալու և միակ միջոցը հաշտութիւնն էր, որ պէտք է կատարուէր մի անկողմնապահ, դիրք ունեցող, սրատաս միջնորդի ձեռքով։ Ուստի դեարմաչաթախցիք դիմեցին Զահրի գիւղի բնակիչ ատաիճանաւոր Նաբաթալի սուլթանին։

Նաբաթալի սուլթանը պատրաստականութիւն յայտնեց, կամեցաւ բարի գործ կատարել, հաշտութիւն կայացնել և այս նպատակով դիմեց հանդուցեալի եղբայներին՝ հաջի Էյլաղին ու Աղիին։ Սոքա թէև պատուով ընդունեցին սուլթանին, բայց սկզբում բացէ ի բաց մերժեցին նորա խնդիրը, յայտնելով որ սորանց խիղճը չէ կարող հանդուրժել, մինչև թշնամիներից չսպանեն մինին կամ միւսին։ Եւ այսպէս, նոյն իսկ միջնորդ սուլթանին վկայ բերելով, երկու եղբայրները մի առ մի թուեցին իւրեանց հանդուցեալ քէաբրայայ Զէյնալ արդինի բոլոր բարեմասնութիւնները՝ մինին տասն ուելացնելով։

Բայց երբ սուլթանը, դարձ դնելով իւր բոլոր հաշտարարական ընդունակութիւնը, յառաջ տարաւ իւր միջնորդութիւնը, կարողացաւ վերջապէս կիսով չափ համոզել եղբայրներին և համաձայնութիւն տանել այն մտքով, որ հաշտութիւնը կկայանայ, եթէ դեարմաչաթախցիք տան մի աղջիկ հանդուցեալի որդուն կնութեան և մի հազար ռուբլի հանդուցեալի որբերուն ապահովութեան։

Նաբաթալի սուլթանը յայտնեց այս պայմանը Դեարմաչաթախցոց, որոնք ընդհանուր ժողովով խորհրդակցեցին, խորհեցին և կարծես համաձայնութեան եկան ու առաջարկութիւններ արին միմեանց թէ ում աղջիկը տան պահանջող թշնամուն, որ պարտութեան նշան է ու անարդանքի արժանի։ Մինը պատասխանեց «իմ աղջիկս դեռ փոքր է», միւսը թէ «աղջիկս հիւանդ է», երրորդը թէ «աղջիկս օրօրոցում է նշանուած, բէշիքքեարթմա է» և այլն և այլն։

Սորանից յառաջացած վիճաբանութիւնն այնքան սաստկացաւ և կրքերն այնքան գրգռուեցին, որ քիչ էր մնացել մի նոր ոճիր գործէին և գիւղն երկու բանակի բաժանէին, բայց

յառաջաւոր մարդկանց խոհեմութիւնը մի կերպով խաղաղացրին բորբոքուած կրքերը, բայց հաշտութեան յոյսը կորաւ, որի հետ կորաւ և այն վարձատրութիւնն, որ կանխօրէն նուիրել էին Նարսէթալի Սուլթանին։

Սորանից յետոյ անցաւ մի տարի և Գեարմաչաթախցիք նորից հաշտութեան կարիք զգալով՝ դիմեցին ստոիճանաւոր Նաչաֆ աղայի միջնորդութեանը։ Վերջինս եկաւ Գեարմաչաթախ, ընդունուեց, հիւրասիրուեց, մի կանխիկ վարձատրութիւն ստացաւ, շռայլեց իւր խոստումներն ու մի առժամանակ յետաձգեց միջնորդութիւնն և ապա մոռացութեան տուաւ, որից յետոյ անցաւ էլի մի տարի՝ աւելի վատթարացնելով Գեարմաչաթախչոց դրութիւնը։

Ահա այդ միջոցին Խաչիկ հայ գիւղի հասարակութիւնն իւր համար տանուտէր ընտրեց իւր համագիւղացի Թադէոս Յակոբեանին, որ «խնամի Թաթոս» անունով յիշատակւում է Խաչիկու հարսանիքում իմ «Ճանապարհորդական նկատողութեանց» մէջ։

Խաչիկը հեռու չէ յիշեալ երկու գիւղերից և ուրեմն վերջինների թշնամական պատմութիւնը արդէն լաւ յայտնի էր նորընտիր տանուտէր Յակոբեանին, որ բարի նպատակ ընտրելով իւր համար, սկսեց միջամտել գործին և Գեարմաչաթախցիք ուրախութեամբ ընդունեցին նորա անկեղծ ու անվարձ միջամտութիւնը։ Յակոբեանն իւրեան յատուկ եռանդկութեամբ և իւր պաշտօնական դիրքի օգնութեամբ կարողացաւ մեղմացնել Բրզդովցիների պահանջն և նախապատրաստել նրանց հաշտութեան համար։

Յակոբեանի ազդեցութեամբ Բրզդովցիները հրաժարուեցին իւրեանց նախկին պահանջներից, այն է չպահանջել այլևս աղջիկ և հազար ռուբլու փոխարէն ստանալ միայն մի հարիւր ռուբլի որբերի օգտին։ Ինքն ըստինքեան հասկանալի է, այս պայմանները, շնորհիւ Թադէոս Յակոբեանի լիովին ձեռնտու էր պատասխանատու կողմի համար, ուստի նա, տանուտէրը շուտափոյթ հաղորդեց ում հարկն է։

Ապա Յակոբեանն սկսեց նախապատրաստութիւններ տես-

նել։ Գործին շքեղութիւն և հաշտութեանը հեղինակութիւն տալու նպատակով նա հրաւիրեց հարևան գիւղերից պատուաւոր թուրք անձինք, այն է Թրքէշ գիւղից՝ Հաջի Ղասումին իւր հինգ համփաներով, Լէզբնրդ գիւղից՝ Մաշադի Իսմայիլին չորս համփայով, Ին-ղուան գիւղից՝ հինգ համփայ, նոյնպէս և Միջանի ուրիշ գիւղերից։ Հաւաքուեց այդ բազմութիւնը Գեարմա-չաթախ գիւղն ընդհանուր խորհրդակցութեան և վճռի։

Գիւղի կողքին, տափարակ դաշտի վերայ մի ստուար շրջան կազմուեց, ուր մասնակցողները ծալապատիկ նստած, գլուխները վայր թեքած, ներքին խորհուրդը ճակատներին ոմանք լուռ էին, ոմանք ծնկակից լինելով ցածր խօսում էին։

Ժողովի խորհրդաւոր լռութիւնը վերջապէս խախտեց Թադէոսի ճառը, որի բովանդակութիւնն այս էր.

«Պատուաւոր հաջիներ, մաշադիներ, քեարբէյներ և համփարներ! Ձեզ բոլորիդ լաւ յայտնի է այն ցաւալի և տխուր դէպքը, որ 6—7 տարի առաջ պատահեց երկու գիւղի, Բրդզովի և Գեարմաչաթախի սահմանում։ Այդ քեարբալայ Զէյնալաբդինի անսպասելի մահն էր, որ, ես հաւատացած եմ, ոչ ոք չէր ուզում, այլ անիրաւ Շէյթանի գործն էր, որ բանն այս տեղ հասցրեց։ Թէ Գեարմաչաթախցիք և թէ Բրդզովցիք բարի հարևաններ են և բարի մարդիկ, դորանց նախկին բարեկամական յարաբերութիւնը հարկաւոր է նորից վերակենդանացնել, ուրեմն հարկաւոր է շէյթանին մէջ տեղից քշել,—Նալլաթ կարդալ նորան։ Երկու գիւղի հասարակութիւնները թող մրաքներից հանեն ոխը, սրտերից՝ քէնը, մոռանան անցեալն, որ հաճելի լինի Ալլահին ու քեարբալայ Զէյնալ-աբդինի հոգին ջանն թուամ հանդստութիւն գտնի։ Ապա ուրեմն, խնդրում եմ, խորհուրդ արէք և ձեր հաւատի ու սովորութեան պահանջների համաձայն որոշեցէք՝ թէ ինչ ձևով կարելի է գործը գլուխ բերել։»

Ժողովը միաձայն շնորհակալութիւն յայտնեց տանուտէր Յակոբեանին նորա բարի ցանկութեան և աշխատութեան համար և յայտնեց որ իւրեանց դարևոր սովորութիւնների համա-

ծայն հարկաւոր է հանդուցեալի հոգու հանգստեան համար հացկերոյթ տալ Բրզդովում երկու գիւղերի բնակիչներին էլ միասին։ Հարկաւոր է, որ Գեարմաչաթախցիք, որքան շուտ կայ գիւղում արու և էգ, ամենեքեան ոև հոգած, կրծքները բաց, ոտաբոբիկ, բաց գլուխներով, մազերը ցանուցիր, հող ու մոխիր ցանած, երևելի տղամարդիկ թրերը վզներից կախած՝ նշան, որ մահուան դուռն են գնում, մոլլաներն երդելով և բազմութիւնը լաց ու կոծով պէտք է գնան Բրզդովի գերեզմանատուն և այն։ Ահա այսպէս է մեր սովորութիւնն, այսպէս էլ պէտք է անենք, պատասխանեցին ժողովականները։

Ապա յայտնեցին տանուտէրին, որ այս գիշեր Բրզդով կուղարկեն քսան փութ ալիւր և երեք ոչխար հացկերոյթի համար։ Տանուտէրն էլ խոստացաւ գնալ վաղը Բրզդով, նախապատրաստել հանդուցեալի եղբայրներին և որդիներին և միջոցներ ձեռք առնել, որ սոքա մի գուցէ յարձակուեն եկուորների վրայ և ոճիր գործեն։ Նոյնպէս կարգի բերել և ուրիշ՝ գործին վերաբերեալ՝ հանգամանքներ։

Հետևեալ առաւօտ տանուտէրն արդէն Բրզդովում անհրաժեշտ կարգադրութիւններ էր անում։ Նա ժողովեց հասարակութիւնը, հրաւիրեց հանդուցեալի եղբայրներին և որդիներին, որոնց տանուտէրն ու հասարակութիւնը թախանձանօք խնդրեցին մոռացութեան տալ ոխն ու քէնն և հաշտուել Գեարմաչաթախցոց հետ, որոնք այս առաւօտ գալու են գերեզմանատուն։ Ճաշկերոյթի ալիւրն ու մսացուներն իսկոյն ուղարկուեցին հանդուցեալի տունը։

Ապա հասարակութիւնն անյապաղ մարդիկ ուղարկեց հարևան գիւղերը մոլլաներ հրաւիրելու Բրզդով։ Լուրը տարածուեց ամէնուրէք ու դրացի գիւղերից թուրք գերդաստանները խումբ խումբ գալիս էին Բրզդով հաշտութեան հանդիսին ներկայ լինելու։

Մինչ այս մինչ այն հրաւիրուած մոլլաները ժողովուեցին գիւղը, ուր այդ միջոցին արդէն հրապարակ էին հանել իմամների արիւնոտ պատկերները, նոյնպէս և հանդուցեալ քեարբալայ Զէյնալաբդինի հանդերձը, որի մէջ նա սպանուել է 6—7

սարի առաջ։ Իմամների պատկերների վերայ մոլլաները ներդաշնակ երգում էին իմամների նահատակութիւնը, իսկ գիւղի կանայք, ղլխաւորապէս հանդուցեալի ազգականները խմբուած սպանուածի հաղուստի շուրջն ազիողորմ կոծով ողբում էին Զէյնալաբդինի մահը։ Լալկան կանայք երեսները պոկոտում էին, ցիրցան մազերի վրայ ցանում էին հող ու մոխիր և ողբով դրուատում էին սպանուածի բարեմասնութիւնները։ Տղամարդիկ ծեծում էին կրծքները։ Տեսարանը սրտաճմլիկ էր...։

Արևն արդէն բարձրացել էր և իւր ոսկեղէն ճառագայթները տարածում էր երկնքի կապուտակ կամարներից Դարալեազեազի քարակաշկառ լեռների վերայ։ Տանուտէրն և ուրիշները մերթ առ մերթ նայում էին այն կողմի վերայ, որտեղից պէտք է գային Գեարմաչաթախցիք և ահա հեռու, բարձրութեան վերայ ստուերի նման երևաց խառն բազմութիւնը։ Մի ծիաւոր եկաւ՝ հասաւ ու հաղորդեց տանուտէրին միւսների գալուստը։

Այստեղ Բրդդովի ժողովը պարապմունքով մոլլաներին՝ ծանրաբայլ շարժուեց դէպի դերեզմանատունը։ Մոլլաները ներդաշնակութեամբ, բայց ողբալի ձայնով յառաջ էին շարժւում՝ տանելով յետևներից խայտաճամուկ բազմութեան արանց, կանանց, երեխանց շարքեր։ Ուղեկցում էր և տանուտէր Յակոբեանը։ Երբ Բրդդովցիք և Գեարմաչաթախցիք ձայները լսելու չափ մօտեցան իրար, այնուհետև սկսեցին երգել հերթով, երբ Բրդդովի խումբը վերջանում էր, սկսում էր Գեարմաչաթախի խումբը և այլն։

Զարհուրելի տեսարան էին պատկերացնում Գեարմաչաթախցիք։ Հասակաւոր ազամարդիկ սև հագուստով, ոտաբոբիկ, շապկի կոճակներն արձակ, կրծքները բաց և զարկելուց կարմրած, խնճուած ու ցանուցիր գլխամաղերի ու մորուսների վերայ հող ու մոխիր ցանած, գլուխները խոնարհեցրած, վիզերից թրերը կախած, ախոռը դէմքով, ոտաբոբիկ սրտաճմլիկ աչքերում, լայ ու կոծով, բարձրաձայն ողբալով եկան՝ շրջապատեցին Զէյնալաբդինի դերեզմանը և նորա հողը բացին արտասուքով։ Սորանց յետևից էլ խուռը բազմութիւն ազամարդկանց,

կանանց, մերկ, բոկոտն երեխանց, բոլորը դլխաբաց, բոլորը հոդոտ ու մոխրոտ, բոլորը ոտաբոբիկ, բոլորը լալիս։ Խռնուած այդ ամբողջ բազմութիւնը լալով ու ողբալով եօթն անդամ պտոյտ կատարեց դերեզմանի շուրջն և ապա չոգեց դերեզմանի վերայ ու շարունակեց լալ ու ողբալ։

Հերարծակ կանանց լաց ու աղաղակը, երեխանց մերկ մարմինները, տղամարդկանց զոռում գոչումը, նորանց մոխրածածկ գլուխն ու երեսը, թրերը վզներին, արտասուքն աչքերին, ողբալի աղերսանքներով ներումն խնդրեն և այլն, մի դարհուրելի տեսարան էր ներկայացնում, որի նմանն ես երբէք չէի տեսած և ոչ մի քարասիրտ մարդ չէր կարող տանել առանց ներքին բուռն յուզմանց։

Բրզդովցիները դէմ առ դէմ կանգնած քարացել՝ ապուշ էին դարձել այդ տեսարանի վերայ և չդիտէին ի՞նչ անեն։ Վերջապէս տանուտէր Թադէոսն տղաչանքով խնդրեց հանդուցեալ Զէյնալաբդինի եղբայրներին խղճահարուել, խնայել, դթալ, ծոտենալ և թրերը վզներից առնելով ներումն շնորհել խոնարհութիւն ցոյց տուող առաջաւոր մարդկանց և նրանց հետ եկած բազմութեանը։ Նոյնն աղերսում էին և Բրզդովցիներից շատերը։

Այդ միջոցին եղբայրները մօտեցան դերեզմանի վերայ չոգած մարդկանց և մին-մին առան նորանց վզներից թրերը, իբրև նշան՝ որ ներումն են շնորհում։

Երբ այս ներման հանդէսը կատարւում էր, Բրզդովցիների միջից յանկարծ դուրս թռան հանդուցեալի որդիներից երկուսը սպառազինուած, կամենալով յարձակուել Գեարմաչաթախցիների վերայ։ Սակայն զգոյշ Թադէոսն իւր ճարպիկ կարգադրութեամբ իսկոյն հրամայեց կալանաւորել նորանց, զինաթափ անել, որով և առնուեց փորձանքի առաջ։

Ապա տանուտէրը թեթև նախատական ձէռով դիմեց միւս Բրզդովցիներին և պատուիրեց նորանց թողնել իւրեանց սառնասրտութիւնը, մօտենալ ներումն խնդրողներին ձեռք տալ և բարձրացնել դերեզմանի վրայից։ Տանուտէրի այս կոչն ունեցաւ այն ազդեցութիւնն որ բազմութիւնը միահամուռ կերպով

ընկաւ գերեզմանի վերայ, ոտի կանգնեցրեց ողբողներին, փաթաթուեց, համբուրուեց նորանց հետ և ապա երկու կողմի մարդիկն էլ վերցնում էին դերեզմանի հողն ու համբուրում։

Այդ օրն այդպէս անցաւ, բայց հաշտութիւնը դեռ կատարեալ չէր, որովհետև հանդուցեալի մի եղբայրը դերեզմանատուն չէր եկել, ուստի հարկաւոր էր հաշտուել և նորա հետ։ Այդ նպատակով երկու գիւղի բազմութիւնն էլ միասին, երդեցիկ մոլլաների ու տանուտէրի առաջնորդութեամբ, դանդաղաքայլ դիմեց դէպի գիւղ, դէպի հանդուցեալի եղբօր տունը։ Գնացքին մասնակցում էին կանայք, աղջկունք, երեխայք, տղամարդիկ և այլն, մօտ 400 հոգի։ Մոլլաներն երգում էին ողբալի հոգևոր երգեր։

Այդ հրաշալի գնացքը պէտք է որ մեղմացներ ամեն մի քիրտ բնաւորութիւն, ընկճէր ամեն մի խրոխտ սիրտ, բայց նա այդպէս չազդեց հանդուցեալի եղբօր վերայ։ Վերջինս՝ վրէժխնդրական զգացումներով լի, պատկառելի գնացքին դիմաւորեց սրով և հրացանով։ Բայց տեղական վարք ու բարքը լաւ ուսումնասիրած տանուտէր Թադէոսը դիտէր վարուելու ձևն այդպիսիների հետ։ Խոտորնակին խոտորնակ։ Նա հրամայեց խկոյն և եթ կալանաւորել այդ անպատկառ մարդուն, զինաթափ անել և հարկադրեց նորան հաշտուել։ Գեարմաչաթախցիք սպանել են մի մարդ, բացատրեց տանուտէրը, նորանք հարիւր մարդով եկել են ոտքերդ ընկնելու, ներումն հայցելու... կամ ներումն շնորհիր, կամ դուրս արի քո մի սպանածի փոխարէն սպանիր նորանցից հարիւրը, նորանք հնազանդ են, ծայն չեն հանիլ, դիտեն՝ որ մահուան դուռն են եկել, առանց դիմադրելու մի կողմից նորանց պարանոցը, միւս կողմից քո սուրը. այսպէս է ձեր օրէնքը. բայց նամարդութեամբ դուրս գալ և խրոխտալ նորանց դէմ, դա տղամարդութիւն չէ, դուրս արի, պատկառանքով ընդունիր այդ հասարակութիւնն և վեհանձնաբար ներումն շնորհիր, որ Ալլահին էլ հաճելի լինի, իրահմանթիրն (ողորմած հոգուն, հանդուցեալին) էլ։ Այսպէս համոզեց տանուտէրը հանդուցեալի եղբօր, որ խոնարհութեամբ ընդառաջ ելաւ, համբուրուեց Գեարմաչաթաղցիների հետ, նե-

րուն շնորհեց։ Սորա հետ եկան, հաշտուեցին և հանդուցեալի միւս որդիները։ Հաշտութիւնն այժմ կատարեալ էր։ Մութն էր, բազմութիւնը մնաց Բրզդովում, տեղաւորուեց գիշերելու դիւղացոց տներում։

Հետևեալ առաւօտ հացը թխած, մսոցուներից կերակուրներն եփած պատրաստի՝ սպասում էին հիւրերին հացկերոյթի։ Գեարմաչաթախցիք՝ արդէն իրրև բարեկամներ, ժողովուեցին հանդուցեալի ազգականների տունը, հոգու հանգստեան հացկերոյթն էլ կատարեցին Բրզդովցիների հետ և հաշտութեամբ ու ցնծութեամբ վերադարձան իւրեանց տները։

Այսպէս կատարուեց հաշտութեան ծէսը, սորանով լուծուեց արեան վրէժը և սորանով էլ վերացուեց Գեարմաչաթախի եօթնամեայ պաշարումը։

ՔԱՋԲԵՐՈՒՆԻ

Բ ա գ ո ւ.

ԴԵՌ

Ստի տոպրակը թիկունքին կապած,
Նենգութեան անարգ դրոշմ ճակատին,
Ամբարտաւանի կուռ գօտին հագած,
Մեֆիստոֆելի ժպիտն երեսին,
Կախարդ, մատնիչի ցուպը ձեռք առած,
Թռչուն որսալու երդումը բերնին,
Իւր որսն էր փնտռում դևը խնդագին.
«Մերկին տաք հագուստ, քաղցածին կուշտ հաց
Նեղեալին փրկանք, վշտին մխիթար.»
Հայրենասիրի ծիրանին հագած
Այդ էր քարոզում դևը անդադար։
Ամեն տեղ նորան հալածում էին
Ամենքը նորան անարգում էին
Միամիտ հայն էր որ չէր ճանաչում
Մինչև հասաւ այս թշուառ վիճակին.
Քանի անմեղներ ձգեց իւր ծուղակ.
Ողջ Հայութիւնը արեց խայտառակ,
Խլեց շատերից ոգին Հայութեան,
Բրիշակ արեց և տուն և վաթան.
Կորիր, հեռացիր ոգիդ կորստեան
Մենք շատ ենք տանջուել քո չար ձեռքերից.
Գտիր քեզ համար մի այլ օթևան.
Վիրաւոր Հայը գարշում է քեզնից։

1 Մարտի 1908 Մ. Ենգիբարեան

ԵՐԱՋԵԱԼ ՈՍԿԵԴԱՐ

I

Բաֆֆի և ապագայ Հայաստանը.—Ոսկեդարը անցեալում և ապագայում.—Հին դարերը.—Երևակայութիւն և զրականութիւն։

«Տաճկա-Հայաստանի գիւղերից մէկն է այն. սակայն ինչպէս գեղեցիկ, մաքուր և օրինակելի։ Տները քարաշէն, սպիտակ որպէս ձիւն և շրջապատուած գեղեցիկ պարտէզներով։ Շրջակայ լեռները ծածկուած են անտառներով, հովիտներում ջրի առատութիւն։ Հայելուման հարթ ճանապարհներ, որոնց վրայ սլանում են կառքեր. և տարւում են այդ կառքերը ոչ թէ անասունների ուժով, այլ շոգիի զօրութեամբ։ Գիւղի բնակիչներն էլ ինչպէս առողջ, ուրախ և լուսաւորուած մարդիկ են, ունեն մի գեղեցիկ եկեղեցի, որ և դպրոց է, ունեն մի ճոխ գիւղատնտեսական դպրոց գիւղային տնտեսութեան վերաբերեալ բոլոր պարագաներով։ Գիւղացիներին պատկանում են սղոցարաններ ու այլ գործարաններ, որտեղ գլխաւորապէս գործում են մեքենաներ և շոգին։ Գիւղացիքն—այր և կին—աշխատում էին ուրախ և զուարթ, բաւական իրանց զբաղմունքից և նրա տուած արդիւնքից։ Ոչ միայն միջնակարգ, այլ և բարձրագոյն ուսում ստանալը գիւղի երիտասարդութեան համար սովորական մի բան է. ահա տանուտէրի մի որդին անտառապահ է, միւսը պրոֆէսօր է Կարինի համալսարանում, երրորդը գնդապետ է Վանի զօրաբաժնի մէջ, իսկ չորրորդը սովորում է նոր Բագրե-

ւանդի գիւղատնտեսական ուսումնարանում։ Գիւղից շատ հեռու չէ և քաղաքը, որի հետ նա հաղորդակցում է երկաթուղային ճանապարհով։ Քաղաքը կառավարչական և մտաւոր կեանքի կենդրոնն է. այնտեղ են տեղի ունենում երեսփոխանական ժողովները, այնտեղ են համալսարանը, հիւանդանոցը և այլն։ Բնակիչները գիտեն յարգել իրանց գործիչներին, որոնց արձանները զարդարում են քաղաքի գեղեցիկ փողոցները։ Լրագիրը—150,000 օրինակ է տարածւում։ Զօրք և զօրանոց չկան, այլ ամեն մի քաղաքացի զինուոր է։

Գեղեցիկ քաղաք... հրաշալի քաղաք. . . .

Տասնեակ տարիներ առաջ այսպէս էր երազում Ռաֆֆին մեր մայր Հայաստանի ապագայի մասին, այլ գեղեցիկ ապագայի մասին, այն գեղեցիկ ապագայի մասին, որ իրագործուելու է 200 տարուց յետոյ։ Ընթերցողը ի հարկէ յիշում է, որ այդ գեղեցիկ երազը տեսաւ Վարդանը իր Լալայի գերեզմանի վերայ։

Վարդանի երազը—Ռաֆֆու երազն էր. և թէպէտև մենք չունինք իր, հեղինակի, վկայութիւնները, այնուամենայնիւ կարծում ենք, որ Ռաֆֆին էլ իր երազը տեսնելիս—անտարակոյս եղել է Թոմաս Մօրի «Utopia»-ի, Ֆուրիէյի «Ֆալանոտէրների», Կաբէի «Ճանապարհորդութիւն դէպի Իկարիայ» և մանաւանդ յայտնի ռուս քննադատ և հրապարակախօս Չեռնշևսկու «Ի՞նչ պէտք է անել» վէպի ազդեցութեան ներքոյ։ Մեր ենթադրութիւնները հիմնւում են այն նմանութիւնների վերայ, որ երեւում են Ռաֆֆու «երազ»-ի և վերոյիշեալ հեղինակների գրուածքների մէջ։ Եւ եթէ կարծենք, որ անգլիացի և ֆրանսիացի հեղինակների գրուածքները դժուար թէ Ռաֆֆու ձեռքը ընկած լինեն, այնուամենայնիւ ռուս հեղինակի «երազ»-ի հետ նա կարող էր ծանօթ լինել, մանաւանդ որ Ռաֆֆու մի քանի նախադասութիւններն անգամ (գիւղացու աշխատանքի, մեքենաների, լեռնային անտառների մասին)—նման են Չեռնշևսկու նախադասու-

թիւններին, որ գործածուած են նրա վերոյիշեալ վէպի հերոսուհու երազի նկարագրութեան մէջ։

Ապագայ Հայաստանը իդէալական աշխարհ պատկերացնելով, մեր հեռաւոր ապագան ոսկէ գոյներով նկարագրելով Ռաֆֆին արել է այն, ինչ որ արել են և անում են տասնեակ ուրիշ հեղինակներ։ Իսկ այդ հեղինակները եղել են թարգման մարդկութեան այն զգացմունքին, որը մեծապէս աշակցում է յառաջադիմութեան։ Դա անբաւարարութեան զգացմունքն է, որը խօսել է մարդու մէջ հէնց նրա առաջին քայլափոխից և խօսում է մինչ օրս էլ—լինի նա քաղաքակիրթ, թէ վայրենի դրութեան մէջ։ Մարդկութիւնս ընդհանուր առմամբ անբաւական է իր ներկայով ու՝—կամ անցեալի կորուսեալ դրախտն է ողբում և կամ երջանիկ ապագայի յուսովն է ապրում։ Այսպէս ստեղծուել են անցեալ ու ապագայ երազական ոսկէդարերը։ Մինչև քրիստոնէութեան, ուրեմն հանդերձեալ կեանքի, քարոզը՝ «ոսկէդարը» ըստ մեծի մասին անցեալումն էր զետեղուում. յետոյ ընդհակառակը—հեռաւոր ապագայում։

Գրեթէ բոլոր հնդ-եւրոպական ազգերի գրականութեան մէջ մենք գտնում ենք մարդկութեան ոսկեդարի նկարագրութիւնը,—ոսկէդարի, որ և մարդկութեան առաջին դարն է եղել։

Հրէաների ասելով այդ ոսկէդարով օգտուել են միմիայն Ադամը և Եւան. դա մեր դրախտն է։ Նոյն այդպիսի դրախտ պատկերացնում էին իրանց և Ասորա—բաբելոնացիք և հնդիկները. վերջիններիս նկարագրութիւնը մենք գտնում ենք Զէնդաւէստաի մէջ։ Մարդկութեան նախահայր և նախամայր Մաշիա և Մաշիանա ապրել են եղել կատարեալ դրախտավայրում, առանց հոգսի, ուրախ և երջանիկ մինչև որ չար ոգին՝ Ահրիմանը նրանց գլխահան է անում և նրանց անկման պատճառ է դառնում։ Առաջին մարդիկ զրկւում են դրախտից, իսկ նրանց սերունդները ճակատի քրտինքով են սկսում իրանց

կեանքը պահպանել և միայն կարողանում են երազել կորուսեալ դրախտի մասին։ Նոյն այդտեսակ աւանդութիւն շատ հին ժամանակներում ունեցել են և ասորա-բաբելացիք։ Յոյն-Հռովմէական դիւցաբանութեան մէջ էլ գտնւում են բազմաթիւ ապացոյցներ այն բանին, որ այդ կլասիկ ազգերն էլ մարդկութեան ոսկէդարը նրա մանկութեան օրերին էին յատկացնում։ Նրանց կարծիքով մարդկութիւնս մի քանի շրջան է անցել՝ ոսկէ շրջան, արծաթէ, պղնձէ, երկաթէ, ոսկեդարում մարդիկ—առաջին մարդիկ—ապրում էին աստուածների նման. նրանք ոչ հոգսեր գիտէին և ոչ հիւանդութիւն, նրանք չէին ծերանում, իսկ մեռնում էին կարծես երազի մէջ. նրանք չէին աշխատում, սակայն ոչ մի բանի երբէք կարօտութիւն չունէին։ Այսպիսի գոյներով է նկարագրել «ոսկէդարը» VIII-րդ դարու յոյն բանաստեղծ Հեզիոդոսը։ Յետոյ սակաւ առ սակաւ մարդկութիւնը կորցնում է իր աստուածային կացութիւնը և սերնդէ սերունդ փոխարինաբար անցնում է վերոյիշեալ շրջանները։ Նմանօրինակ և ուրիշ յոյն բանաստեղծներ հեռու անցեալում փնտրել են երանեալ ոսկեդարը։

Հռովմայեցոց հասկացողութեամբ էլ առաջին մարդկանց առաջին դարը—մարդկութեան ոսկէդարն է եղել, երբ ոչ կռիւ, ոչ իշխանութիւն է եղել, ոչ օրէնք և ոչ վախ—և այնուամենայնիւ ամենուրեք բաւականութիւն և երջանկութիւն է տիրել։ Աւելացնենք սորա վերայ և այն հետաքրքրական փաստը, որ այժմեան վայրենի ազգերից շատերը, որոնք բնակւում են Ասիայում, Ափրիկայում և Հարաւային Ամերիկայում—նոյնպէս գաղափար ունեն մարդկութեան ոսկէդարի մասին. զետեղելով այդ ոսկէդարը մարդկութեան կեանքի առաջին, երեխայական, շրջանում։

Ներկայիս անբաւական մարդկութիւնը միշտ հաւատացած է եղել, որ հեռաւոր անցեալում, մարդկութեան մանկութեան օրերում, գոյութիւն են ունեցել աւելի եր-

ջանիկ օրեր, բայց դժբաղդաբար կորսուել, անհետացել են։

Բայց միթէ յաւիտեան։ Մենք չենք կարծում, որ մարդն այն բոպէին, երբ իրան նկարագրելիս է եղել կորուսեալ դրախտը, կորցրած է եղել և իր յոյսը կրկին տիրելու այդ դրախտին։ Յոյսը նրա մէջ երևի միշտ եղել է, բայց երևան չի եկել։ Մարդս միշտ աւելի հեշտութեամբ մոռանում է անցեալի վատ կողմերը և ընդհակառակը ուրախութեամբ յիշում է անցեալից լաւ ու երջանիկ օրերը։ Գուցէ այդ յատկութեան վերայ են հիմնուած և այն բազմաթիւ զրոյցները կորուսեալ դրախտի ու անցեալ ոսկէդարի մասին, որ գոյութիւն ունէին և ունին զանազան ազգերի մէջ պէսպէս վարիանտներով։

Սակայն ինչպէս էլ որ բացատրենք այդ երևոյթը— հարցը նրանումն է, որ ոսկէդար որոնելու շարժառիթը, սկզբնապատճառը եղել է ներկայի անբաւարար լինելը։ Մարդս անբաւական իր նիստ ու կացով, իր կեանքով, իր շրջապատով, իր ներկայով—քննադատում է իր ժամանակը և մտամոլոր որոնում անցեալում աւելի երջանիկ ժամանակներ (մեր պապերի ժամանակները), կամ սկսում է ստեղծել իր երևակայութեան մէջ այդպիսի մի ոսկէդար, որը մօտ կամ հեռու ապագայում պիտի երջանկացնէ ամբողջ մարդկութիւնը։

Գրականութիւնը, մարդկութեան այդ մտաւոր գանձարանը, տուել է բազմաթիւ գեղեցիկ և հետաքրքրական պատկերներ երևակայական ապագայ ոսկէդարի։ Պղատոնի ժամանակից սկսած մինչև մեր օրերը գիտնականները, բանաստեղծները, փիլիսոփաները, վիպասանները՝ փորձել են պատկերացնելու մեր առաջ իդէալական պետութիւն կամ համայնք, որտեղ վերջապէս պիտի տիրեն ազատութիւն, եղբայրութիւն և հաւասարութիւն։ Ծանօթանանք այդ կրթիչ գրուածքներից ամենանշանաւորների հետ։

II

Պղատոնը և նրա իդէալական պետութիւնը.—Ռամկավարութիւն և կոմմունիզմ.—Քրիստոնէութիւնը և խիլիուզմը.—Հիասթափութիւն։

Իդէալական պետութիւններ նկարագրող փիլիսոփաների երկայն շարքը սկսւում է Պղատոնով։ Դրանք խօսում են այնպիսի պետական կազմակերպութեան մասին, որը կամ պիտի գոյութիւն ունենայ հեռաւոր ապագայում, և կամ իբր թէ գոյութիւն ունի աշխարհիս մի ինչ որ անյայտ անկիւնում։ Այդ իդէալական պետութիւնները կամ աշխարհները անշուշտ հեղինակների վառ երևակայութեան ծնունդ են, բայց և այնպէս արտափայլում են իրանց մէջ ոչ թէ միայն հեղինակի մտաւոր ոյժը, զարգացողութիւնը և հեռատեսութիւնը, այլ և նրա ժամանակակից ընդհանուր մարդկային աշխարհայեցողութիւնը։ Ուստի և այդ գրուածքները հետաքրքրական են թէ անհատական հոգեբանութեան տեսակէտից և թէ ընդհանուր պատմութեան։

Գրեթէ 22 դար սրանից առաջ Յունաստանի մեծ փիլիսոփան իր երկու գրուածքով տալիս է մեզ առաջին պատկերը այնպիսի մի պետութեան, որը նրա կարծիքով իդէալական է։ Դրանք «Պետութիւն» և «Օրէնքներ» կոչւող փիլիսոփայական և քաղաքատնտեսական ուսումնասիրութիւններն են։ Բացի դրանցից նա խօսում է իդէալական պետութեան մասին իր «Կրիտիաս»-ի մէջ. բայց այդ գրուածքի միայն առաջին մասն է մեզ հասել և նա, ըստ երևոյթին, չի կարողացել ազդեցութիւն ունենալ յետագայ սերնդների վերայ։ Մինչդեռ «Պետութիւն»-ը և «Օրէնքներ»-ը մեծապէս ազդել են բազմաթիւ փիլիսոփաների, քաղաքագէտների, գիտնականների և վիպասանների վերայ։ «Պետութեան» մէջ Պղատոնը տեսականօրէն է խօսում թէ ինչպէս պէտք է լինի իդէալական պետու-

թիւնը. «Օրէնքների» մէջ տալիս է իր այդ տեսութեան գործադրութիւնը։ Ծանօթանանք այդ իդէալական պետութեան սկզբունքների և կազմակերպութեան հետ։

Նա հիմնուած է «Ճշմարտութեան» վերայ, որը համապատասխանում է մարդկային առաքինութեանը։ Վերջինս հետևանք է մարդկային հոգու երեք ոյժերի, այն է՝ իմաստութեան, քաջութեան և ցանկութեան համաչափական միաւորութեան։ Պետութեան մէջ դրանց համապատասխանում են՝ գիտնականները, զինուորները և հողագործները։ Գիտնականները պէտք է կառավարեն, զինուորները պաշտպանեն, իսկ հողագործները պահեն ժողովրդին։ Որպէս զի խելացի և ուժեղ ժողովուրդ լինի, հարկաւոր է մեծ ուշադրութիւն դարձնել մանուկ սերնդի դաստիարակութեան վերայ. և Պղատոնը մանրամասնօրէն խօսում է այդ մասին, առաջարկելով հոգս քաշել միայն առողջ սերնդի մասին։ Այդ քիչ է. նա պահանջում է, որ ծննդաբերութիւնն էլ սահմանուած կարգերով լինի, այսինքն որպէս զի միայն առողջ երիտասարդները իրաւունք ունենան ամուսնանալու և սերունդ առաջացնելու։

Պղատոնը տալիս է նոյնպէս իր պետութեան արտաքին ձևը. նա պէտք է ցամաքային երկիր լինի, բաժանուած 12 շրջանի՝ սրանք էլ՝ 5040 հողաբաժնի։ Ամեն մի հողագործ ստանում է մէկ հողաբաժին, որի կէսը քաղաքումն է, իսկ միւս կէսը—դուրսը։ Հողաբաժինը ծախու չէ։ Այդ փոքրիկ կալուածքները անցնում են ժառանգաբար հօրից—մեծ որդուն։ Բնիկները վաճառականութիւնով չեն զբաղւում, դա օտարազգիների գործն է, որոնք սակայն 20 տարուց աւել իրաւունք չունեն մնալու այդ երկրում։

Կառավարութիւնը զուտ ռամկավարական է։ 12 շրջանից ամեն մէկը ունի իր մայրաքաղաքը, ուր և կենտրոնացած են շրջանի կառավարչական հաստատութիւնները, մարմինները և պաշտօնեաները, որոնց ընտրում է

ԼՈՒՄԱՅ Բ. 1908

ինքը ժողովուրդը։ Ամբողջ պետութեան մէջ օրէնսդրութեան գործադրութեանը հսկում են 37 «օրէնքի սահմաններ». կայ նոյնպէս առանձին ընդհանուր պետական վերաստուգիչ յանձնաժողով։

Որպէս զի ժողովրդի մէջ չլինի կռիւ և մրցումն, Պղատոնը առաջարկում է հանրականութիւն (կոմմունիզմ) թէ ընտանեկան կեանքի և թէ սեփականութեան։ Սակայն տեսականօրէն այդ առաջարկելով, նա չի կարողանում լիովին գործադրել իր այդ իդէալը «օրէնքների» մէջ նկարագրուած պետութեան մէջ։ Դրա փոխարէն նա մեծ ոյժ է տալիս կառավարութեան ձեռքը, որը իրաւունք ունի միջամտելու մարդուս թէ անհատական, թէ ընտանեկան և թէ հասարակական կեանքի մէջ. ի հարկէ միշտ ընդհանուրի շահերը ի նկատի ունենալով։ Կառավարութիւնը ոչ միայն սահմանում է, թէ անհատը ինչ գործով պէտք է զբաղուի, ինչ կրօն դաւանի և այլն, այլ և թէ ինչ պիտի ուտէ և որքան գինի պիտի խմէ...

Պղատոնը մեծ նշանակութիւն է տալիս կնոջը և պաշտպան է հանդիսանում նրա իրաւունքների։ Միևնոյն ժամանակ նա իր իդէալական պետութեան մէջ պահպանում է ճորտութիւնը։ Վերջապէս Պղատոնը խօսում է նոյնպէս մանրամասնօրէն քրէական և քաղաքացիական օրէնսդրութեանց մասին և ինչպէս և այլ հարցերում, այստեղ ևս իր երևակայական պետութեան մէջ այնպիսի մարդասիրական օրէնքներ է սահմանում, որ միմիայն մեր դարերում հրատարակուեցան։ Սակայն չի վերացնում մահուան պատիժը, և ընդհակառակը նրան իր պետութեան մէջ նա մեծ տեղ է տալիս, մինչդեռ արդի քաղաքակիրթ ազգերը սակաւ առ սակաւ իսպառ հրաժարւում են այդ պատժից։ Այսպէս երկարօրէն և մանրամասնօրէն խօսելով իդէալական պետութեան կազմակերպութեան մասին Պղատոնը կարծում է, որ այդպիսի պետութիւնը երկարատև, գուցէ և յաւիտենական է լինելու, իսկ ժողովուրդը գոհ և երջանիկ, քանի որ կառավարու-

թիւնը փիլիսոփաների ձեռքին է լինելու, հասարակական պաշտօնները—ամենաընդունակ ընտրեալների, իսկ ընտանեկան կեանքի մէջ և սեփականութեան կատարեալ կոմունիզմ։ Այսպէս էր երևակայում իրան մարդկութեան «ոսկեդարը» ամենամեծ փիլիսոփաներից մէկը։

Ի հարկէ նրա շրջանակը բաւականին նեղ է արդի մարդկութեան համար, բայց և այժմ նրա յայտնած ցանկութիւնները դեռ իդէալների աշխարհում են, ուրեմն որ աստիճանի հանճար էր հարկաւոր ունենալ դրանք յայտնելու սրանից տասնեակ դարեր առաջ...

Պղատոնի իդէալական պետութեան կազմակերպութիւնը չիրագործուեց ի հարկէ և մարդիկ շարունակում էին երազել երջանիկ ապագայի, իդէալական պետութեան մասին—բազմազան ձևեր տալով իրանց այդ ցնորքներին։ Քսէնոփոնոսը իր «Կիւռոպէդիայում» տալիս է կատարեալ, իդէալական պետութեան պատկերը, որը հիմնուած է անսահման միապետութեան վերայ։ Պղատոնից յետոյ ևս մի քանի յոյն փիլիսոփաներ տուել են երազական պետութիւնների նկարագիրներ, պետութիւնների, որոնք գտնուում կամ հեռու հիւսիսում (Հեկատոսի «Քիմմէրիական քաղաքը», կամ Հնդկաստանի մօտերքը (Էվգէմիրի «Սուրբ հրովարտակ» գրուածքը), կամ Արաբիայի խորքերը, կամ մի ինչ որ կղզու վերայ և այլն և այլն։ Այդ երկիրների ժողովուրդը առողջ է և երկարակեաց, կանանց և սեփականութեան—հանրականութիւն է, երջանկութիւնը ընդհանուր է՝ կամ որովհետև բնական կեանք են վարում, բնութեան գրկում, կամ այն պատճառով, որ պետական կազմակերպութիւնը կատարեալ է։

Մենք կարծում ենք, որ երջանիկ ապագայի մօտալուտ ազատ գալստեան յոյսը շատ աւելի ընդհանուր էր հին դարերի վերջերում, քան այդ երևում է։ Թէ պետական կարգ ու սարքի, թէ հաւատալիքների, թէ բարքերի անկումը—անհանգստացնում էր ամենքին, իսկ անտեսական սուղ վիճակը ստիպում էր խեղճ ժողովրդին յոյսը դնել

գալիք երջանիկ օրերի վերայ։ Այս սպասողական դրութիւնը շատ նպաստեց քրիստոնէութեան մուտքին արևմտեան Եւրոպայի սահմանները։ Քրիստոնէութիւնը նոր կեանք էր աւետում, երջանկութիւն ամենքի համար, սէր և հաւասարութիւն, Պղատոնի փնտրած ճշմարտութիւնը՝ նրա երազած իդէալական կազմակերպութիւնը։ Ինչ հոգ, որ Քրիստոս խօսում էր բոլորովին այլ թագաւորութեան, այլ կազմակերպութեան մասին։ Ծարաւ ժողովրդի համար նրա քարոզը կենսական աղբիւր էր։ Որտեղից նա ստանում էր ոյժ տանելու ներկայ չարքաշ կեանքը, հաւատացած լինելով, որ «ուր որ է—պիտի բացուի վառ գարուն»։ Առաջին քրիստոնեաների հանրական կեանքը ցոյց է տալիս, որ նրանց համար քրիստոնէութիւնը ոչ միայն հաւատակիք էր, կրօն էր, դաւանութիւն էր,—այլ և հասարակական-տնտեսական կազմակերպութիւն, որի հիմքը հանրականութիւնն էր։ Մերկ և քաղցած Հռովմի ռամիկը երջանիկ էր քրիստոնէական համայնքի մէջ՝ որովհետև այստեղ նրա վերայ նայում էին իբրև մարդու վերայ, տալիս էին նրան զգեստ և կերակուր, խօսում էին նրա հոգու մասին, մնկիր ապագայ էին նկարագրում նրա երևակայութեան առաջ։

Բայց երբ քրիստոնէութիւնը ժամանակի ընթացքում ահագին ծաւալ ստացաւ, դիրք և ազդեցութիւն ձեռք բերեց՝ հալածուած տեղից—հալածող դարձաւ, մոռացաւ հոգու հոգսը ու հարստութեան և փառքի ետևից ընկաւ—խեղճերի իդէալները սկսեցին փշրուել։ Ժողովուրդը տեսաւ, որ քրիստոնէութիւնը յանձին կաթոլիկ եկեղեցու և նրա կղերի, չկարողացաւ իրան բաւականութիւն տալ ու երկրիս վերայ երջանկութիւն սահմանել—երեսը շուռ տուեց իրականութիւնից և յոյսը դրեց Քրիստոսի խոստացած «երջանիկ՝ երանեալ պետութեան վերայ»։

Բայց ե՞րբ է հաստատուելու այդ պետութիւնը...

Ժողովուրդը, նոր-ընծայ քրիստոնեան անհամբեր էր։ Նա ուզում էր, որ ժամանակը որոշուի։ Եւ ահա ստեղ-

ծուեց ու տարածուեց «խիլիազմը»*), որը հաւատացնում էր թէ տիրելու է Քրիստոսի հազարամեայ թագաւորութիւնը։ Հին կտակարանը, հեթանոսական գուշակութիւնները, փիլիսոփաների գրութիւնները, Քրիստոսի քարոզը, ժողովրդի տարտամ վիճակի հոգեբանութիւնը—այս բոլորը միասին ստեղծել էին արդէն I-ին դարում Քրիստոսից **) յետոյ «խիլիազմի» ուսմունքը, որը ժամանակի ընթացքում հալածանքների ազդեցութեան տակ ամենուրէք տարածուեց և հաստատուեց, չնայած որ Աւգուստինոսի նման երեցներ ապացուցանում էին այդ ուսմունքի սխալ լինելը։

X-րդ դարում,—այսինքն երբ մօտենում էր հազարերորդ թուականը—խիլիազմը այն աստիճան տարածուել էր և ժողովուրդը այն աստիճանի հաւատացած էր, որ հազար թուականին սկսուելու է ահեղ դատաստանը և Քրիստոսի արդար թագաւորութիւնը—որ մարդիկ, ժամանակակիցների ասելով, հազարներով մտնում էին վանք, բաժանում էին իրանց հարստութիւնը, մեղայ գալով—պատրաստուում էին արժանանալ Քրիստոսի ահեղ դատաստանին։ Հազարերորդ թուականը եկաւ և անցաւ, մութ խաւարը չվերացաւ. միջին դարուց, իսկ ժողովուրդը մնաց նոյն անտեսական ծանր վիճակի մէջ, օրինազուրկ և աւանդականութեան ու կղերականութեան քաւութեան նոխազը։

Կարծես նրան պահպանողը այն հաւատն էր և յոյսը, որը ոգևորել էր ադաջին քրիստոնեաներին՝ թէ վաղ թէ ուշ դրութիւնը պիտի փոխուի և երկրիս վերայ պիտի հաստատուի սէր և եղբայրութիւն, ազատութիւն և հաւասարութիւն։ Ժողովուրդը իրան քնեցնել էր աալիս գեղեցիկ երազներով, ապագայ ոսկէդարի յոյսերով։

(Կը շարունակուի)

ՄԻՆԱՍ ԲԵՐԲԵՐԵԱՆ

---

*) Յունական «խիլիոս» բառից, որ նշանակում է հազար։

**) Նախքան Քրիստոսի ծն. գոյութիւն ունեցող խիլիաստական ուսմունքը չպէտք է շփոթել քրիստոնէական խիլիազմի հետ։

ՍԱԱԴԻԻ ԳԻԼԻՍՏԱՆԻՑ

Պատմում են, որ մի պարսիկ թագաւոր բռնապետաբար ձեռն երկարել էր հպատակների ստացուածքին և այն աստիճան նեղացնում էր նրանց, որ ժողովուրդը նրա խարդախութեանց ու հասցրած զրկանքների երեսից մասամբ գաղթեց ուրիշ երկիրներ, մասամբ էլ դիմեց պանդխտութեան։ Հետևանքն այն եղաւ, որ հպատակները քչացան, տէրութեան եկամուտները նուազեցան, գանձարանը դատարկուեցաւ և թշնամիներն ամեն կողմից վրայ տուին։

Ով ցաւակցող սիրտ է խնդրում սև օրին,
Թող լաւ օրը չինայէ իր փողին.
Բռնակալից գերին անգամ խոյս կը տայ,
Բարեգործին աշխարհ գերի կը դառնայ։

Մի օր նրա ատեանում Շահնամէից կարդում էին Զուհակ թագաւորի անկումն ու Փրիդունի գահ բարձրանալը։ Վէզիրը դիմեց բռնակալին ու հարցրեց. Փրիդուն ոչ զօրք ունէր ոչ զօրութիւն, ի՞նչպէս ուրեմն թագաւոր դարձաւ։

—Ասաց. ժողովրդի ոյժով, քանի որ, ինչպէս լսեցիր, ժողովուրդը նրա կողմն էր։

—Արդ, պատասխանեց վէզիրը, Տէր Արքայ, քանի

որ թագաւորը ժողովրդով է թագաւոր, էլ ինչի՞ ես ժողովրդիդ ցրիւ տալիս. չլինի՞ թագաւորելու միտք չունիս։

Ստեղծիր բանակ անձնադիր ոգւով.
Արքան արքայ է բանակի ոյժով։

Թագաւորն հարցրեց. ի՞նչ անեմ, որ զօրքս էլ, ժողովուրդս էլ իմ կողմս լինին։—Վէզիրը պատասխանեց. թագաւոր ասածդ պէտք է բարեսէր լինի և գթոտ, որպէս զի ամենքը նրա հետ լինին և հանգիստ ապրին նրա տէրութեան հովանու տակ, բայց դու ոչ մին ես ոչ միւսը։

Բռնակալը բռնակալ՝ գահ պահպանել չի կարող, Գայլը գայլ է, ոչ մի գայլ գառն արածել չի կարող։ Թագաւորն երբ զրկանքի ծրագիր է պատրաստում, Իր տէրութեան պարսպի հիմքն է ընդ միշտ խորտակում։

Բարեմիտ վէզիրի խորհուրդը թագաւորի սրտին դուր չեկաւ. զէմքը խոժոռեց ու հրաման արձակեց որ բանտարկեն։ Շատ չանցաւ, թագաւորի հօրեղբօրորդիները կռուի դուրս եկան նրա դէմ ու զօրքերին ոտքի հանեցին իրանց օգնելու և տէր կանգնեցան հայրենի տան գահին։ Ժողովուրդը, որ անողորմ թագաւորի ձեռից ցրիւ էր եկել այս ու այն կողմ, ինքն էլ եկաւ միացաւ դրանց և միահամուռ ոյժով խլեցին նրանից արքայական գահն ու տուին նրա հակառակորդներին։

Թագաւորն իր ժողովրդին թող չնեղէ, չտանջէ.
Օր կը գայ, երբ մարդ չի գտնիլ, որ օգնութեան զէթ կանչէ.
Խաղաղ պահիր ժողովրդիդ և ապահով կաց մարտից.
Արդարասէր թագաւորին ժողովուրդն է մարտակից։

Թագաւորի մէկը մի պստիկ պատանու հետ նաւ էր նստել. պատանին բնաւ ծով տեսած չէր և նաւի

նեղութիւններին անծանօթ էր. սկսաւ լալ ու կոծել և անդամները դողն առաւ։ Ինչքան գգուեցին, փայփայեցին, չհանգստացաւ. թագաւորի ուրախութիւնը տխրութեան փոխուեցաւ. հնար չէին գտնում։ Նաւում կար մի գիտնական.—Որ հրամայես, ասաց թագաւորին, ես դրան կը լուեցնեմ։—Թագաւորն ասաց. Մեծ շնորհ, մեծ բարիք արած կը լինիս։— Գիտնականը հրամայեց, որ պատանուն ծովը ձգեն։ Պատանին մի քանի անգամ սուզուելուց յետոյ մաղերից բռնեցին ու քաշեցին դէպի նաւի կողմը։ Թեղճ տղան իսկոյն երկու ձեռով կախուեցաւ նաւի կողերից ու բարձրացաւ վեր և անմիջապէս նստաւ նաւի մի անկիւնում ու հանդարտեցաւ։ Թագաւորի զարմանքն եկաւ ու ասաց. Գաղտնիքն ի՞նչ էր. Գիտնականն ասաց. Տէր արքայ, այս պատանին ընկղմելու դառնութիւնը դեռ չէր ճաշակել և ապահովութեան յարգը չէր իմանում, այնպէս, ինչպէս որ առողջութեան յարգը գիտէ նա, ով հիւանդութեամբ բռնուել է։

Գարեհացը քեզպէս կուշտին չի տալ համ.
Քեզ ինչ որ դառն, ըստ իս այն է քաղցրահամ.
Դրախտի հուրուն մի դժոխք է քաւարանն,
Դժոխեցուն քաւարանն է դրախտանման.
Ո՞ւրտեղ նա որ եարի գրկում քէֆ քաշում,
Ո՞ւրտեղ նա որ աչքը դրանն է մաշում։

Մի արաբ թագաւոր խոր ծերութեան մէջ հիւանդացել և առողջութիւնից յոյսը կտրել էր։ Յանկարծ դռնից ներս մտաւ մի ձիաւոր և աւետիք տուաւ, թէ այս ինչ բերդն առանք, թշնամիները գերուեցան և երկրի զօրքն ու ժողովուրդն էլ միահամուռ հնազանդութիւն ուխտեցին Ձեր հրամաններին. թագաւորն այս խօսքը լսեց թէ չէ՝ վշտալից սրտից մի ցուրտ ախ քաշեց ու ասաց. Այդ

աւետիսն ինձ համար չէ, այլ գուցէ իմ թշնամիներիս, այսինքն տէրութեանս ժառանգորդների համար։

Աւաղ, այս յուսով անցաւ կեանքս անգին,
Որ ինչ կար սրտումս, դռնիցս ներս գայ.
Յոյսս պսակուեց, բայց վա՛յ իմ բախտին,
Որ անցնող կեանքիս էլ ետ գալ չկայ։

Օրհասի ձեռն հնչեց փողը բաժանման.
Ա՜յ, իմ աչեր, հրաժեշտ տուէք իմ գլխին.
Ա՛յ դուք ափեր ու բազուկներ ու թեւեր,
Տուէք միմեանց ձեր հրաժեշտը յետին.
Թշնամական հասաւ մահը իմ վրայ,
Արիք, տեսնեմ, ո՞վ սիրելիք իմ անգին.
Ես չիմացայ, օրերս ինչպէս վերջացան.
Ես հոգս չարի, դուք հոգացէք այդ մասին։

Պարսկ. թարգմ. Մ. Վ. Մաքսուտեան

ՏԷՐ-ԳԱԲՐԻԷԼ ՊԱՏԿԱՆԵԱՆՑԸ [1]

Գլուխ Է.

Զարմանալի և առ հասարակ տարօրինակ մի դրութիւն էր ստեղծուել Պատկանեանցի համար Նախիջևանում. քաղաքի մեծամեծները անօգուտ էին համարել նորա ծառայութիւնը հասարակութեան և չէին ուզեցել մինչև իսկ նորա մնալը քաղաքում, ինքը Պատկանեանցն էլ դուրս էր եկել քաղաքից, որ միւս անգամ այլ ևս չվերադառնայ, այլ փոխադրուի Հաշտարխան, Պետերբուրգ կամ մի ուրիշ տեղ, բայց առաջնորդը ներհակութեամբ նորան ձեռնադրել էր և ուղարկել քաղաք, և այն էլ մայր եկեղեցին։ Այս դեռ ոչինչ. նա, դուցէ, դեռ կարողանար մի տեսակ կառավարուել, եթէ քաշուած ապրէր, ճանաչէր միայն իւր ծուխը և շատ շփում չունենար քաղաքի կառավարիչների հետ—մագիստրատի, դումի, որբոց իրաւարանի, քաղաքագլխի, հոգաբարձուների և այլն։ Բայց, արի տես, որ առաջնորդը նորան քարտուղար էր նշանակել Հոգևոր կառավարութեան մէջ և վերահսկող եկեղեցիների, ուրեմն, տուել էր նորան մի այնպիսի պաշտօն, որ նա կամայ թէ ակամայ պիտի ամենասերտ յարաբերութիւն ունենար երէցփոխների, քահանաների, Հոգևոր կառավարութեան անդամների և քաղաքի միւս կառավարիչների հետ։ Այս էլ դեռ բաւական չէր, ամեն մի կենցաղ գործ, ամեն մի փոփոխ յանձնարարութիւն, ամեն մի

---

[1] «Լումայ» Ա.

անձնականութիւն շօշափող ու դրամական հաշուի վերաբերեալ խնդիր առաջնորդը սովորութիւն էր արել նորա միջոցով կատարել, նորա ձեռքով լուծել։ Մի խօսքով, ի նկատի առնելով ժողովրդի և առաջնորդի թշնամական յարաբերութիւնը, կարելի է ասել, Պատկանեանցը դարձել էր մի միջնաթումբ, որին երկու կողմից էլ բաղխում էին մրրկայոյզ ծովի կատաղած ալիքները. նա եղել էր մի քաւութեան նոխազ, որի գլխին երկու կողմից էլ թափուում էին հարուածները։ Եթէ աղաների սրտին ոչ ցանկալի մի կարդադրութիւն էր լինում հոգևոր կառավարութեան անդամների, եկեղեցական դրամական հաշիւների, քահանաների և առ հասարակ ամեն հոգևոր գործի վերաբերմամբ, ուր շօշափուում էր սորա նորա անձնական և դրամական հաշիւները, իսկոյն այդ վերագրուում էր նորան, իբրև թէ այդ բոլորը կատարուել և կատարուում է նորա ցանկութեամբ, նորա ասելով, նորա գրելով, նորա դրդելով, և ահա բողոքներ էին, որ գնում էին Փիշինեւ, դրպարտութիւններ, չարախօսութիւններ, ամբաստանութիւններ էին, որ լինում էին նորա վերայ։ Առաջնորդն էլ տեսնելով բողոքների յաճախելը և Պատկանեանցի պատկերն էլ նորա մէջ հրէշային կերպով պատկերացած լինելը և, տեղի հեռաւորութեան պատճառով էլ, միջոց չունենալով սուտը ջոկել ճշմարտութիւնից, այդ բողոքներից եթէ տասին չէր հաւատում, տասից մէկին էլ է հաւատում էր և յանդիմանութիւն դրում նորան, երբեմն և պատժում՝ փիլոնն առնում։ Ինչ անէր Պատկանեանցը. եթէ մի բան այնպէս չէր անում, առաջնորդի հրամանը կամ յանձնարարութիւնը չկատարող էր հանդիսանում, եթէ, հակառակ առաջնորդի կամքին, թողնում դուրս էր գալիս հոգևոր կառավարութիւնից, ըմբոստ էր համարուում և պատժուում։ Եթէ այս բոլորի վերայ աւելացնենք և Պատկանեանցի տաք խառնուածքը, ամեն բան սրտին մօտ ընդունելու յատկութիւնը, ամեն բանի հեռաքրքիր լինելը, ամեն բան քրքրելը, տեղեկանալը, իմանալը, երևան հանելը և առ հասարակ նորա հարցասէր բնաւորութիւնը, հոգևորների կամքին հակառակ գնալը, հասարակաց գործերին անձնականութիւն խառնելը և իւր եսը,

խօսքը յամառ կերպով առաջ քշելու ադանձնայատկութիւնը, կրսանանք մի փատարեալ պատկեր նորա կեանքում եղածի, ապցած-գնացածի. չենք խօսում արդէն այն բանի մասին, որ արդէն շատ յաճախ էր «անսանձ մոլեգնութիւն ընկնում նորա սրտի մէջ», որ ստիպում էր նորան խօսելու, գրելու և կատարելու այնպիսի գործողութիւններ, որոնք հանում էին նորան պատշաճութեան և օրինականութեան սահմանից, նոյնպէս և որ նա յաճախ էր գործ դնում «խարդախ հնարիմացութիւններ», որ ուրիշ խօսքով նշանակում է, թէ նա շատ անգամ էր իրան թոյլ տալիս զեղծումներ գործելու իւր պաշտօնավարութեան գործերում։

«Բրիկաւորը» լինում է վերջին սխրագործութիւնը, որ Մարկոս աղան գործում է Պատկանեանի դէմ։ 1832 թիւը նորա քաղաքագլխութեան եռամեակի վերջին տարին էր, և նա այլևս յոյս չունէր նորից վերընտրուելու։ Սովորաբար երբ մէկի քաղաքագլխութեան եռամեակի վերջին տարուայ զատիկը մօտենում էր, յինանց մէջ արդէն սկսում էին խօսել նոր ընտրութիւնների մասին և դանադան թեկնածուների անուն մէջ բերել, և արդէն իսկ տարուայ վերջին ժողովրդի ձայնը որոշում էր, թէ դուռաչիկայ քնարութիւններին ո՞վ պէտք է 70 քուէից մեծամասնութիւնը շահէ։ Այս անգամ էլ այսպէս է լինում, և ամէն տեղ խօսում ու որոշում են, որ Խալիբը պիտի ընտրուի քաղաքագլուխ 1833, 34 և 35 եռամեակի համար, ինչպէս որ լինում էլ է։ 1833 թուի տարեմտին հանդիսաւոր պատարագ է լինում Ս. Լուսաւորչում, և նորընտիր քաղաքագլուխը և դատաւորները երդւում են արքութեամբ կատարելու իւրեանց պաշտօնը։ Եկեղեցուց ամենքը գնում են Մատգիսարատ Դուռի կողմը, որտեղ և Մարկոս աղան յանձնում է Խալիբին Դուռի կնիքն ու քաղաքի գանձարանի բանալին, յետոյ անցնում են Մագիստրոսի կողմը, որտեղ նոր դատաւորները նստում են իւրեանց աթոռները և լսում ու ընդունում հին դատաւորների և հոգաբարձուների շնորհաւորանքը։ Այդտեղից գնում են բաղմութեամբ Մարկոս աղայի տունը և շնորհակալութիւն են յայտնում նորա եռամեայ ծառայութեան հա-

մար և ապա — Խալիբի տունը՝ շնորհաւորելու նորա ընտրութիւնը և յարգուելու։

Յարութիւն կամ Պապուկ Խալիբեանը աղա Պօղոս Խալիբեանի որդին էր։ Այդ Պօղոսը վախճանել էր Ս.-Պետերբուրգում, ուր դնացել էր նա Ղրիմից 1778 թուին միւս պատգամաւորների հետ կայսրուհու մօտ՝ դաղթականութեան խնդրի և արտօնութիւնների համար։ Նա թողել էր չորս զաւակ՝ մի որդի և երեք աղջիկ։ Որդին էր Յարութիւնը, որ հօր մահից յետոյ մնացել էր շատ փոքր մօր խնամակալութեան ներքոյ։ Շուտով աղջիկներից մէկը հարսնանում է Գիւմուշքի Խաչերես աղա Համալեանին, իսկ միւսը, որի անունն էր Կատարինէ, Մահտեսի Եղիազարի որդի Պետրոս Բաբասինեանին, որ երկար ժամանակ վանառականապետի պաշտօն վարելու պատճառով, սովորաբար կոչուում էր «Բաղրդեան-բաշի»։ Հանգուցեալ Պօղոսի այրին իւր աղջիկներին ամուսնացնելուց յետոյ, մնալով մենակ իւր փոքրիկ Յարութիւնի հետ, տեղափոխուում է իւր փեսայ Պետրոսի ճոխ տունը, և Յարութիւնը մեծանում է այդտեղ լիութեան և առատութեան մէջ։ Պետրոս Բաբասինեանը կնքում է Յարութիւնին առաջ Յովհաննէս փարժապետի, յետոյ Սերովբէ Պատկանեանցի մօտ, իսկ երբ այդ վերջինը տեղափոխուում է Ջաշտարխան, նա յանձնելով նորան հօրից մնացած քաժինը=4 հազար «սօմ» դումար, տալիս է Գէորգ աղա Օղաբաշեանի խանութը՝ հմտանալու առևտրական գործին։ Դորանից յետոյ շուտով երբ չափահաս է դառնում Յարութիւնը, Գէորգ աղան հաւանելով նորան, փեսայացնում է իրան և բնակեցնելով առանձին տան մէջ իւր քովում, մասնակից է անում իւր առևտրական գործին և հսկում է նորա վերայ, որ նա տպրի խնայդդութեամբ և համեստութեամբ։ Պատմում են, որ յաճախ Գէորգ աղան հսկելու համար, գալիս է ծածուկ նայում է նորա պատուհանից, և երբ նկատում է նորա սեղանի վերայ մի որ և է զեղխութիւն, ներս է մտնում և խրատում։ Առևտրական գործերով ստէղծուած Յարութիւնը գնում է Մոսկով և Նիժնի ազնվականաբար և յաջող գործունէութեամբ շուտով բաւականին կարողութիւն է ձեռք բերում։

Նորա հարստութեան աղբիւրներից մէկն էլ լինում է սօնա-վանառում իւր համաքաղաքացիների մուրհակները շատ էժան գնով ձեռք բերելը և ամբողջութեամբ խեղդելով ստանալը, որով շատ վատ օրինակ է լինում և ուրիշներին։ Բայց ամենագլխաւորը, որ նպաստում է Նորան յետագայ ժամանակներում մեծ հարստութիւն դիզելու,—լինում է այն, որ նա կարողանում է յաջող առևտրական ընկերակցութիւն կազմել, որի միջոցով և սկսում է մեծ քանակութեամբ արդար իւղ բերել Սիրիրի կողմերից և շահաբեր ու արդիւնաւէտ վաստակով ներքի նահանգներում վաճառել և օտար երկրներ էլ արտահանել։

Ցարութիւն Խալիբեանը թէև առաջին անգամն էր, որ ընարում էր քաղաքապետութիւն, բայց արդէն հմուտ և լաւ ծանօթ էր քաղաքային գործերին և կառավարչական եղանակին. նա դեռ Խաչատուր Խոմաջեանից առաջ երկրորդ անգամ քաղաքապետութիւն ընտրուած Վարդերես Հալաջեանի ժամանակ Նորա խորհրդատուն էր եղել, իսկ իւր աներոջ Գէորգ աղայի և Մարկոս աղայի ժամանակները միանգամայն տիրապետել էր նոցա կամքին և համարեա թէ ինքն էր կառավարում ու ընթացք տալիս քաղաքի բոլոր գործերին։ Նորա յարաբերութիւնը Ներսէսի և Պատկանեանցի հետ շատ վատ էր. նա էր խորհուրդ տուել վերոյիշեալ Տէր-Գաբրիէլ Տէր-Գաբրիէլեանին Ներսէսի թղթին այնպէս պատասխանել և. Նորա ցանկացած տեղեկութիւնները, նա մանաւանդ դրամական հաշիւները, չտալ. նա էր դրդել Մարկոս աղային այնպէս վարուել Պատկանեանցի հետ և այնպիսի ցնդաբանութիւններ ու յանդուգն թղթեր գրելու առաջնորդին. նա էր, վերջապէս, յորդորել Պատկանեանցին վարժապետութիւնից հանելու, քահանայ ձեռնադրուելուն արգելք լինելու, և այլն և այլն, որով և արժանացել էր գլուխ դասուելու առաջնորդին հակառակ կուսակցութեան, որ իւր մի թղթում 1832 թուին Ներսէսը անուանել էր «Խալիբի սրիկայք»։

Տէր-Գաբրիէլը, որ քանի ժամանակից ի վեր ճանաչում էր Նորան և, իբրև հոգևոր գործերի կառավարիչ, յարաբերութիւն ունէր Նորա հետ և որ աշխատում էր Նորա սիրտը շահել, յա-

ճախ գիշողութիւններ անելով նորան, այժմ էլ մի նամակ է գրում Ներսէսին և մեկնելով նորան գործի դրութիւնը և Խալիբի պէս մարդուն թշնամի ունենալու անշահաւէտութիւնը և, ընդհակառակը, նորան իրանց կողմը դրաւելու օգտակարութիւնը, խնդրում է, որ նա մի շնորհաւորական նամակ գրէ նորան, յոյս տալով, որ գորանով անշուշտ սէր և խաղաղութիւն կըլինի նոցա մէջ։ Նամակի պատասխանը ստանում է Խաչատուր Խոմաչեանը, ծրարի մէջ լինում է երկու նամակ՝ մէկը Խոմաչեանին, որի մէջ գրած էր, թէ Պատկանեանցը այնքան յանդգնել է, որ իրան, առաջնորդին, խրատներ է գրել, իսկ միւսը՝ Պատկանեանցին, որի մէջ գրուած էր, թէ Նախիջևանում եղած խռովութիւնների պատճառը նա ինքն է, և հրամայում էր, որ այնուհետև նա իրաւունք չունենայ առանց գիտութեան Խաչատուր ազգի իրան նամակ գրելու։ Այս կողմից յոյսը կորելով, նա դիմում է Խալիբին և համոզում ու յորդորում է նորան, որ նա անէ հաշտուելու առաջին քայլը և նամակ գրէ առաջնորդին, սակայն նա թէև չէ չի ասում, բայց անվերջ յետաձգում է, մինչև որ հասնում է զատիկը և, երաշտութիւն լինելու պատճառով, յայտնուում է, որ հացի թանգութիւն պիտի լինի։ Պատկանեանցը Լուսաւորչի երէցփոխ Զաքարեան Յովհաննէս ազգի ձեռքով հանում է եկեղեցու փողը և ցորեն է գնում, որով մի կողմից հացի թանգութեան առաջն է առնում, միւս կողմից էլ եկեղեցու շահն է աւելացնում, որովհետև փողը քանիցս դարձուած է անում և տոկոս բերում։ Այդ սովի խնդիրը շատ ասէկոսէի առարկայ է լինում քաղաքում։ Ոմանք ասում են, թէ Խալիբեանք են այդ արուեստականօրէն ստեղծել, որ ազգատ ժողովուրդը սովամահ լինի, կոտորուի, և «Օղուրսրդ»—բարի-չէին համարում Պապուկ ազգի քաղաքագլխութիւնը, որովհետև այդ պատահում է հէնց նորա քաղաքագլխութեան առաջին տարին. ոմանք էլ՝ Խալիբեանք, Մրկրրեանք և Վարդերեսեանք, ասում էին, թէ Տէր-Գաբրիէլն է «վեցհազարեակի» հնարքով այն սովը բերել Նախիջևան, և նա յանախ այդպէս պիտի անէ, երբ նորա ու ժողովրդի մէջ ծագի խռովութիւն։ Բայց այդ չի վնասում Պատկանեանցին, ընդ-

հակառակը, շատերը սկսում են ապաւինել նորա աղօթքին, և 1834-ի ծննդեան ու զատկին հարիւրաւոր տներ հրաւիրում են նորան, որ նա դայ և իրանց տները օրհնէ։

Նախիջևանի երէցփոխները դանդատուում էին, թէ քահանաներն ինքնագլուխ դանձանակ են շրջեցնում եկեղեցիներում, բայց թէ հաւաքուած փողն ինչ է լինում, յայտնի չէ։ Երբ այդ դանդատներն աճում են և տրտունջը սոնստկանում, Տէր-Գաբրիէլը հաւաքում է Հոգևոր կառավարութիւն քահանաներին և երէցփոխներին՝ մի կարգ դնելու, վերացնելու սրբատունջների պատճառը։ Քահանաները պնդում են, որ Երէցփոխները չխառնուեն այդ գործին, որովհետև նոքա այդ դանձանակներից բաժին են հանում իւրեանց չքաւոր աղգականներին. երէցփոխներն էլ մեղադրում էին քահանաներին։ Տէր-Գաբրիէլը տեսնելով, որ երկու կողմն էլ սուտ ու խարդախ են, հրաւիրում է «աղքատաց դանձապետին» և առաջնորդական գործակատարին, որ նոցա միջոցով կարողանայ հաշտեցնել և մի որոշ սահման դնել, բայց նոքա մէկզմէկու վերայ յարձակուելով, կռուում են և թողնում, հեռանում են կառավարութիւնից։ Այն ժամանակ Պատկանեանցը կարգադրում է, որ երբ մի քահանայի ծխի մէջ հարկաւոր լինի մի ընտանիքի համար դանձանակ շրջեցնել, այն քահանան առնէ տոմսակ երէցփոխից և տանէ, տայ աղքատաց դանձապետին, և նա այն տոմսակը ուղարկէ քաղաքագլխին, որ երբ իւր ստորագրութեամբ վաւերացնէ այն, նոյն տոմսակի զօրութեամբ Հոգևոր կառավարութիւնը հրաման տայ քահանային ծանուցում անել և դանձանակ շրջեցնել և արդիւնքը հասցնի դանձապետին, որ նա հատուցանէ չքաւոր ընտանիքին։ Պատկանեանցի այս կարգադրութիւնը առաջնորդական գործակատարին և Հոգևոր կառավարութեան անդամներին բողոքելու առիթ է տալիս նորա վերայ. նոքա մեղադրում էին Պատկանեանցին, որ նա դիտաւորեալ Հոգևոր կառավարութիւնը ենթարկել է մարմնաւոր իշխանութեան, իսկ Տէր-Աստուածատուր քահանայ Նազարենիկեանը դրում է Ներսէսին, թէ Պատկանեանցը, որ չկարողացաւ նամակագրութեամբ հաշտեցնել սրբազանին Խալիբի հետ, այդ միջոցով կա-

բողացաւ այնպէս անել, որ Խալիբի մասը լինի Հոգևոր կառավարութեան գործերի մէջ։ Թէև Պատկանեանցը գրում, ցրում է իւր վերայ եղած բողոքները և վերականգնում է նրշմարտութիւնը, բայց արդէն ուշ է լինում, դորանից առաջ բողոքները սաանալուն պէս, առաջնորդը արդէն դրած է լինում նորան յանդիմանութիւն։

Յարութիւն վարդապետ Ալամդարեանը, որ Հաշտարխանից գնացել էր Մոսկով 1815-ին և մնացել էր այնտեղ մինչև 1823-ը, այնտեղից էլ գնացել էր Թիֆլիս և մնացել էր մինչև 1828-ը և մեկնել էր Քիշինև 1831-ին, առաջնորդի հրամանով 1833 թուին, Խալիբի քաղաքապետութեան առաջին տարին, դալիս է Նախիջևանի Ս. Խաչ վանքը և այդտեղ օրէցօր սպասում է, որ կրսատնայ և վանահայրութեան և քաղաքի ուղիղների յաջորդութեան պաշտօնները։ Սակայն նա սխալուում է. նորա ակնկալիքը զուր է լինում, չի կատարուում, և նա այդ բոլորը վերագրում է Պատկանեանցին ու սաստիկ զայրանում նորա վերայ ու վշտանում։ Նախիջևանցիք կամենում են նորան ոչ թէ միայն վանահայր և յաջողդ տեսնել, այլ և առաջնորդ, և այդ նպատակով մի բաղմատտորագիր թուղթ են գրում կաթուղիկոսին. իսկ ինքն Ալամդարեանցը «կաշի» կոչուած Ստեփան եպիսկոպոս Վեհապետեանի միջոցով յարաբերութեան մէջ է մտնում կաթուղիկոսի հետ առաջնորդութեան գործի համար։ Բայց այդ էլ անիրագործելի է մնում, որովհետև Կարբեցին ասում է, թէ թողնենք Ներսէսին հանդիստ իւր առաջնորդական աթոռի վերայ, որ նա էլ մեզ հանդիստ թողնէ մեր հայրապետական գահի վերայ։ Երկու տեղից էլ յոյսը կտրելով, նա իր բոլոր զայրոյթը թափում է Պատկանեանցի վերայ, աշխատելով իւր այդ անյաջողութեան վրէժը նորանից առնել, նամանաւանդ որ Խալիբեանք անդադար դրդում ու դրդռում էին նորան։ Նա միշտ գնում դալիս է Սերովբէ վարժապետի առունը, որովհետև իւր փեսան տիրացու Պետրոսն անբաժան ապրում էր իւր եղբօր հետ միասին հօր տանը, և բնականապէս յաճախ պատահում էր Տէր-Գաբրիէլին և ամեն անգամ էլ առանց խօսք ու զրոյցի, առանց Տէր-Գաբրիէլին

վիրաւորելու, սիրտը խոցելու չէր լինում։ Ցարութիւն վարդապետի այդպիսի վարմունքի յանախ կրկնուելը, հետզհետէ սրում էր նոցա յարաբերութիւնը և ատելութեան ու թշնամութեան սերմեր ցանում նոցա սրտերում և պատրաստում հողը՝ այդ բոլորը մի օր սասակապէս բռնկեցնելու, որ և պատահում է 1834 թուի տարեմտին եկեղեցում։ Ալամդարեանը այդ օրը քարոզ է խօսում Ս. Լուսաւորչում և էլ նախատինք չի ճեռում, որ չթափի Պատկանեանցի դլխին։ Տէր-Գաբրիէլը, որ առաջուց դորգ էր փռել, պատրաստել տուել քարոզչի համար, երբ քարոզը վերջանում է և նա դալիս է կանգնելու այդ դորդի վերայ, առնում է դորդը և շպրտում ժողովրդի դլխի վերայից ժամկոչին. ասելով՝ «Առ այդ դորդը, դորա վերայ կանգնողը դեռ չեկաւ կամ չի եկել»։ Մեծ շփոթութիւն է ընկնում եկեղեցու մէջ, և ժողովուրդը պառակտուում է երկու մասի՝ ոմանք Ալամդարեանի կողմնակից և ոմանք Պատկանեանցի։

Խանիբեանք կամենալով վիրաւորել Պատկանեանցին Մրկրտիչ Մոռզովի պատկը Բաղիրդեան-բաշի Պետրոսի դստեր հետ կատարել է տալիս Ցարութիւն վարդապետին. նոյն Խանիբեանց աշխատանքով Ցարութիւն վարդապետը զածկին շատ տեղ անօրհնէք է մնում դալիս և մեծապէս արդիւնաւորուում։ Զատկից յետոյ Ալամդարեանը հրամայում է իւր փեսայ տիրացու Պետրոսին, որ նա բաժանուի եղբօրից և առանձին բնակի, որ և նա կատարում է մայիսին, երբ դեռ իւր Քերովբէ որդին մի տարեկան էր։ Այդ ժամանակները վախճանում է Մրզապարոնեան Մանուկ Դէվկենեանի կինը, Խաչատեան Գաբրիէլ աղայի դուստրը, որի թաղման հրաւիրուում է և Ցարութիւն վարդապետը և մի այնպիսի դամբանական է արտասանում, որ կարելի էր համարել հայ պերճաբանութեան օրինակ։ Ցուղարկաւորութիւնից յետոյ նա դնում է իւր դստեր նոր բնակարանը շնորհաւորելու, երբ նա ներս է մտնում, պառկում է տախտակաշարի վերայ և բացագանչում՝ «Փառք քեզ, Աստուած, որ իմ զաւակի տանը կարողացայ ոդի առնել»։ Միւս առաւօտ, որ երկուշաբթի էր, լսում է քաղաքի մէջ, թէ

աւազակները տեղեկանալով, որ Ցարութիւն վարդապետը զատկին տնօրհնէքից մեծ արդիւնք է ստացել, դնացել են Ս. Խաչ վանքը, կողոպտել են երկու վարդապետին և մերծ ի մահ վիրաւորել են Ալամդարեանին սրով ու երկաթէ գործիքով։

Այդ լուրի վերայ քաղաքի երևելիներն իսկոյն հաւաքուում դնում են և Ցարութիւն վարդապետին դիականմոն գագաղի մէջ դրուած բազմութեամբ բերում են քաղաք։ Բժիշկներից մէկը յանձն է առնում բժշկելու նորան, բայց իզուր. 23 վերք էր ստացել նա, և ամեն մի վերքն օրը երեք անգամ խարուում էր։ Տէր-Գաբրիէլը հէնց նոյն օրը, երբ մարմինը բերում են, դնում և հաշտուում է նորա հետ. նա Ցարութիւն վարդապետի բերանից մի մեղայական նամակ է դրում Ներսէսին և տանում, ոտքանքով և ձեռքանքով սարիպում, որ ձեռք դնէ, բայց նա թէև յօժարում է, սակայն ձեռք չունէր, որ ստորագրէր, որովհետև ձեռքը միշտ կարուած էր և միայն մէկ չլի վերայ կախուած էր մնացել։ Միտքն է բերում Պատկանեանցը Ներսէսի այն խօսքը, որ նա ասել էր նորան Ալամդարեանի վերաբերմամբ՝ Քիշինեւում իւր նանապարհ դուրս գալու ժամում առաջնորդարանի պարտիզում, թէ այս նամակ դրողի ձեռքը կտրուի և այդ խօսքը բերանից հանողի լեզուն պապանձուի։ Ձեռքը կտրուել էր, լեզուն էլ մահից մի քանի օր առաջ կապուեց։ Հոդեվարքը մի քանի օր երկարում է և մեղայական նամակը, որ ինքը Պատկանեանցը ստորագրել էր նորա տեղ, դեռ հասած չի լինում առնչնորդին, որ նա վախենում է և թաղուում վանքի սրահում, որտեղ նա կամենում է եղել իրագործել այն, որ ցանկացել էր Յովսէփ Արղութեանը, բայց չէր յաջողել, այսինքն Ս. Խաչը դարձնել հայերի համար մի նոր Մխիթարեան ուխտ։

Այնուհետև Խաղիբեանք աշխատում են իւրեանց կողմը քաշել Թադէոս վարդապետ Բէկնազարեանցին, որ, ինչպէս ասացինք, եկել էր Նախիջևան Մրկրը Պոսովի Ս. Աստուածածնայ եկեղեցու հաշուետուութեան գործի քննութեան համար, և իւրեանց ազդեցութեան և հարստութեան շնորհիւ շուտով յաջողում են իւրեանց և այդ ծեռնարկութեան մէջ և թշնա-

մացնում են վարդապետին Պատկանեանցի հետ։ Առաջ, երբ Պատկանեանցը յարուցանում է այդ խնդիրը, Ներսէս մի առանձին ուշադրութիւն չի դարձնում դորա վերայ, բայց յետոյ երբ բողոքներ են լինում այդ մասին նախարարութեան, նա անմիջապէս հրամայում է Հոգևոր կառավարութեան և Պատկանեանցին, որ Մագիստրատի միջոցով շուտով հաշիները պահանջեն, բայց Մագիստրատը Խալիբի թելադրութեամբ լռում է, Մրկրը ապան էլ հրաժարուում է հաշուետուութիւնից։ Պատկանեանցի թշնամիները շտապում են հաստատել առաջնորդին, թէ հաշիւ չներկայացնելու պատճառը ինքը Պատկանեանցն է, որ եթէ նա չլինի, այդ գործը շատ շուտ վախճան կըստանայ։ Պատկանեանցը տեսնելով, որ իւր պատճառով խռովութիւնը զօրանում է, դրում է այդ մասին առաջնորդին և հրաժարուում է Հոգևոր կառավարութեան քարտուղարութեան պաշտօնից, որի հետևանքն այն է լինում, որ առաջնորդը այդ ըմբոստութիւն համարելով, զրկում է նորան քահանայագործութեան իրաւունքից։ Պատկանեանցի հրաժարուելովը սակայն խնդիրը չի լուծուում, Մրկրը ապան գարձեալ հաշիներ չի տալիս, որից հասկացուում է, որ, ուրեմն Պատկանեանցը չի եղել պատճառը։ Առաջնորդն ուղարկելով Թադէոս վարդապետին, կարդում է նորան քննիչ այդ գործին, պատուիրելով միանգամայն, որ եթէ Պատկանեանցը համաձայնի նորից մտնել Հոգևոր կառավարութիւն, գարձնել նորան քահանայութիւնը և օգնական առնել նորան քննութեան գործում։ Պատկանեանցը չի համաձայնում. նա նստում է տանը և վարժապետութիւն է անում Հոգևոր վարժարանում, շատանալով այն չնչին արդիւնքով, որ ստանում էր գրչախաւորապէս հոգևոր կոչման պատրաստուող աշակերտներից։ Դոքա, այդ հոգևորական աշակերտները, շատ դիխացուանք էին տալիս իւրեանց ուսուցչին. նոքա դժգոհութեամբ էին յաճախում դպրոց. նոքա ըմբոստ էին և պատիւ ու պարծանք էին համարում իւրեանց համար գրպարտելու իրանց ուսուցչին, նա մանաւանդ որ այդ ըմբոստութիւնն ու գրպարտութիւնը վարձատրուում էր Խալիբից։ Բաւական էր, որ մէկն այդ աշա-

կերտներից թողնէր Պատկանեանցին և անցնէր Խալիբի կողմը, —այդպիսին իսկոյն կրվարծատրուէր։ Շատ օրինակներ եղան, որոնց մէջ առաջինը Գանձապետեան պատանին էր, որ յետոյ, իբրև վարձատրութիւն, եղաւ Տէր-Թովմաս և միշտ մնաց Խալիբի սիրելին ու պրօտեժէն, ինչպէս և տիրացու Ալէքսան Զրայեանը, որ քանի հաւատարիմ էր Պատկանեանցին, ատեան էր, բայց հէնց որ հեռացաւ նորանից, պաշտպանութիւն գտաւ ամենից։ Ներսէս տեսնելով նորա յամառութիւնը, աւելի ևս բարկանում է. նա կամենալով նիւթականապէս աւելի ևս նեղ վիճակի մէջ ձգել և այդպիսով ստիպել նորան կատարել իւր կամքը, հրամայում է փակել հոգևոր վարժարանը և զրկել նորան վերջին արդիւնքից։ Այդ հրամանի վերայ 1836 թուին, Գաբրիել տղա Խոջայեանի քաղաքապլխութեան առաջին տարին, փակուում է հոգևոր վարժարանը, դոյութիւն ունենալով ընդամենը 4 տարի բոլոր ժամանակ Պատկանեանցի դեկավարութեամբ, որ ծառայում էր առանց ռոճկի։

1836 թուի ապրիլին Տէր-Գաբրիէլի ծնողները յանկարծ թողնում, գնում են Հաշտարխան, որ շատ բամբասանքի առիթ է լինում քաղաքում։ Ինքը Տէր-Գաբրիէլն էլ միտքը դրած է լինում գնալ այնտեղ, ուր կանչում էր նորան Սերովբէ եպիսկոպոսը, որ ծեռնադրել էր նորա եղբօրը Պետրոսին քահանայ Ստաւրապոլ քաղաքի վերայ և դեռ նորա պսակուելու ժամանակ Հաշտարխանում կարգացած լինելով «Նոր-Յեփթայէն», ապսպրել էր, որ դորա հեղինակը դայ իւր մօտ, ասելով, թէ երբէք նորա և Ներսէսի մէջ հաշտութիւն չի լինիլ, որովհետև նոքա երկուսն էլ «ես շատ դիտեմ» ասող են։ Բայց գնալու համար հարկաւոր էր անցաթուղթ, որ Ներսէս երբէք չէր տալ նորան, ուստի և նա կաշկանդուած մնում էր Նախիջևանում։ Դոյն իսկ 1836 թուին վախճանում է Սերովբէ վարժապետը Հաշտարխանում, և Տէր-Գաբրիէլը վերջնականապէս փոխում է իւր մտադրութիւնը Հաշտարխան տեղափոխուելու։ Նա այդ ժամանակները նիւթականապէս ամենախղճուկ վիճակի մէջ է լինում. ամեն տեղից արդիւնքը կտրուել էր և ապրելու, ընտանիք պահելու ոչ մի աղբիւր չէր մնացել։ Ընտանիքն էլ մե-

ծացել էր. սարկաւագութեան ժամանակ ծնուել էին Յովհաննէս, Մարիամ և Ռափայէլ զաւակները, քահանայութեան ժամանակ—Վառվառէն և Վահագն։ Նա ապրուստի միջոց հայթայթելու համար, մատաժում է բանալ իւր սեփական մասնաւոր վարժարանը և այդ նպատակով գնում է մերձակայ Ռոստով քաղաքը, քննութեան ենթարկուում արքունի զաւառական վարժարանում, ստանում վկայական և իրաւունք մասնաւոր դպրոց բանալու Նախիջևանում—երկրեզուեան վարժարան հայոց և ռուսաց, որից այնքան դժգոհ է մնում Ներսէս, որ մինչև իսկ այդ մասին գրում է և նախարարութեան։ Ահա Տէր-Գաբրիէլի այդ մասնաւոր դպրոցումն է լինում, որ աշակերտում են նորան Միքայէլ Նալբանդեանը, Խրլրշեան Յակոբը, Գրիգոր Սալտիկեանը և միւսները։

ԵՐՈՒԱՆԴ ՇԱՀԱԶԻԶ



«ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՊԱՆԹԷՈՆ»

† ՀԻԲՇՄԱՆ ՀԵՆՐԻԽ

Գերմանական լեզուագէտ Հիբշմանը, որ դասախօսում էր Ստրաբուրգի համալսարանում համեմատական լեզուագիտութիւն, ծնուել է 1848 թուին։

Հայ լեզուագիտութեան կորիֆէներից մինն է, որ երկար տարիներ ուսումնասիրեց մեր լեզուն և ստեղծեց մի ամբողջ շկոլա հայ լեզուի ծագման մասին։ Նրա գլխաւոր աշխատութիւնը «Grundzuge der Armenischen Efimologie» որ տպագրուեց 1883 թուին, ներկայացնում է հայ լեզուի քննա-պատմական ուսումնասիրութիւնը։ Հայոց լեզուի վերաբերեալ նորա հետևեալ գլխաւոր աշխատութիւնը վերջերս տպագրուում էր «Հանդէս Ամսօրեայ»-ի մէջ և բացի այս աշխատութիւններից ունի նաև շատ ուրիշ աշխատութիւններ իւր մասնագիտութեան վերաբերեալ։

—

† ԱԼԷՔՍԱՆԴՐ ԻՎԱՆՈՎԻՉ ԶՈՒՊՐՈՎ

Միւնխենում փետրուարի 24-ին վախճանուեց Զուպրով Ալէքսանդր Իվանովիչը։

Նորան ճանաչող բազմաթիւ անձնաւորութիւններ զարմանալի կերպով հաշտուում են այն մտքի հետ՝ թէ որչափ բարձր էր Զուպրովը իբրև գիտնական, նոյնչափ իբրև մարդ-քաղաքացի։

Նա ծնուել է 1842 թ. և աւարտել Մոսկուայի համալսարանի իրաւաբանական մասը. 1874 թ. նա կարդում էր Մոսկուայի համալսարանում քաղաքական տնտեսագիտութիւն։

Առանձնապէս բեղմնաւոր էր նորա գործունէութիւնը համալսարանում, ուր նա բարելաւեց քաղաքական տնտեսագիտութեան և վիճակագրութեան աւանդումը, բայց դորանով չէր բաւականանում Զուպրովը։ կեանքի բոլոր արտայայտութիւնները նորա մէջ արձագանք էին գտնում. նորա մեղմ ու զգայուն հոգին

տպաւորելով այդ արտայայտութիւնները՝ տալիս էր կոմպէտենտ ձայն։ Գրական գործունէութիւնը Զուպրովը սկսեց «День и молва» թերթով և ապա անցաւ «Русскія Вѣдомости» թերթին, որին նա 35 տարի ոգի և ուղղութիւն էր տալիս։

Բացի այդ թերթերից Զուպրովը գրում էր նաև «Юридическій Вѣстникъ» և «Русская Мысль» ամսագրներում։ Նորա դասախօսութիւնները մինչև այժմ նիւթ են տալիս երիտասարդ-իրաւաբաններին և ընթերցասէր հասարակութեան։

Զուպրովը մասնակցում էր նաև բազմաթիւ կոնգրեսների արտասահմանում և ընկերութիւնների, որոնց անդամ էր մինչև իւր մահը։

Հիւանդութիւնը ստիպեց Նորան 1899 թուականին թողնել համալսարանը, ուր նա պրոֆէսսորի պաշտօն էր վարում, սիրելի ամենից, և հեռանալ արտասահման, որտեղ նա չէր դադարում շարունակել իւր գիտական հասարակական գործունէութիւնը և հետևելով ռուսաց կեանքին չէր դադարում արձագանք տալ այս կամ այն երևոյթին։

Նորա մահուանից 4 օր առաջ միայն տպագրուեց «Руск. Вѣд.» մէջ Նորա յօդուածը։ «Համայնքի վերացման սօցիալական հետևանքները», ուր ուժեղ կերպով ապացուցանում է թէ որքան ՁՆասակար է գիւղացիների համար հողի ազատ անցնելը մի ձեռքից միւսը։

Այժմ լսենք թէ ինչ են ասում Զուպրովին ճանաչողներից ոմանք։

«Գնաց խոշոր հեղինակաւոր գիտնականը, բարձր տաղանդաւոր հեղինակը, աչքի ընկնող հասարակական գործիչը։ Աչքերը ընդմիշտ փակեց բարձր մարդասէր, ղգայուն դէպի բոլոր գեղեցիկը և գարին, ղգայուն դէպի ամեն կսկիծ և տանջանք, անասելի մտերիմ և սիրելի մարդ, ընդհանուր յարգանքով օգտուող, ընդմիշտ սիրելի Նորան գիտցողների համար. գիտութեան մէջ դա ոյժ էր, որի հեղինակաւորութեան առաջ խոնարհում էին մասնագէտները։

Ա. Ի. Զուպրովի նշանակութիւնը ռուս գիտութեան, գրականութեան, հասարակական կեանքի մէջ այնքան մեծ է, որ կարող է գնահատուել միայն մասնագէտների կողմից...»։ Դ. Անուչին։

Մենք այստեղ կբերենք Մ. Կավելինակու հեռագիրը, որը բնորոշում է Նորա հայեացքը Զուպրովի մասին։ «Զուպրովի մահը մեծ հարուած է ոչ միայն Նորա բարեկամներին, այլ յանձին Նոցա ռուս գիտութիւնը կորցնում է իւր հայներից մէկին, իսկ ռուս հասարակութիւնը—իւր հոգեկան ղեկավարներից մէկին»։

«Առանձին կերպով թանգ է Զուպրովի անունը, գրում է Մոսկ. համալսարանի ռէկտոր Մանուիլովը, Մոսկուայի համալսարանի համար, որի հետ նորան կապում էր երկարամեայ գիտական և մանկավարժական գործունէութիւնը։ Այստեղ նա պաշտպանում էր իւր դիսսերտացիաները և ստանձնեց քաղաքական տնտեսագիտութեան ամբիոնը, որը թողեց միայն մի քանի տարի առաջ, երբ հիւանդութիւնը ստիպեց գնալ արտասահման։»

Հետևեալ երկտողը գեղեցիկ կերպով բնորոշում է Զուպրովի վերաբերմունքը դէպի հասարակութիւն և ընդհակառակը.

«Նորա, որոնք եղել են Ա. Ի.-ի մօտ, ընդունելութեան ժամերին, իհարկէ, երբէք չեն մոռանալ մի հատիկ իւր տեսակի պատկերը, որպիսին նրանք տեսնում էին։

Բազմատեսակ հասարակական դրութիւն ունեցող մարդիկ, տղամարդ և կանայք, ծեր ու երիտասարդ, աղքատ ու հարուստ ժողովում էին Ա. Ի.-ի մօտ օգնութիւն և խորհուրդ խնդրելու. նորա ընդունարանը այդ օրերը մտաբերում էր ժողովրդական բժշկի ընդունարանը.»

Սպերանսկին գրում է «լի կեանքով, նա սաստիկ սիրում էր կեանքը և առանց յոգնելու հետաքրքրւում նորանով, նորա բոլոր անթիւ բազմատեսակ ձևերով.»

Հետաքրքիր է նաև Ս. Մուրոմցևի կարծիքը, որը և բերում ենք լրացնելու այն երկար շարքը, որը ստիպում է մեզ ևս միանալ ընդհանուր ձայնի ու ցաւել այդպիսի բարձր հոգու ու ազնիւ քաղաքացիի կորուստը։

«Նորա մէջ մարդը միանում էր հասարակական գործիչ ծառայողի հետ, հասարակական գործիչը ամբողջ էութեամբ մարդ էր։

—

† Ա. Ի. ԷՐՏԵԼ.

1908 թ. փետր. 7-ին վախճանուեց Ա. Ի. Էրտէլը-ռուս վիպասանը։ Սա պատկանում էր 70 ական թվականներին զարգացող ռամկական (народническій) հոսանքին. Էրտէլը չէր ուզում տեսնել գիւղացու մէջ բարձր իդէալ, այլ նորա ներքին հոգեկան բարոյականութեան մէջ նա տեսնում էր շատ դրական կողմեր, որպիսիք պակաս էին «ինտելլիգենտ» կոչուած հասարակութեան։ Նա իւր վէպերի նիւթ դարձրեց գիւղը իւր բնակիչներով, և առանձին հոգեբանական նրբութեամբ նկարագրում էր ընտրած կեանքը։

Ա. Ի. ծնուեց 1855 թուին և իւր ամբողջ կեանքը անց է

կացրել բուն ժողովրդի մէջ, որ և հնարաւորութիւն տուեց նորան աւելի խորը ուսումնասիրել այդ կեանքը։

Գրական գործունէութեան հետ Էրտէլը միացրեց և մանկավարժական գործունէութիւնը և վերջին տարիներ ժենք տեսնում էինք նորան գիւղական դպրոցների ուսումնական և բժշկական մասերը բարենորոգելու վերայ աշխատելիս։

Վերջերս աշխատում էր գիւղական դպրոցներին մատչելի և լաւ դասագրքեր մատակարարել, բայց վերջին իղձը անկատար մնաց... Մահը շուտ առաւ նորան իւր գիրկը։

Էրտէլը թողեց բարի յիշատակ թէ նորան գիտեցողների և թէ դպրոցական գործի անկեղծ մշակների մէջ։

—

† ԷԴՄՕՆԴ ԴԷ-ԱՄԻՉԻՍ

1908 թ. փետրուարի 27-ին 62 տարեկան հասակում կնքեց իւր մահկանացուն Բորդիգեր քաղաքում Դէ-Ամիչիսը։ 70 և 80-ական թուականներին Դէ Ամիչիսի սահուն և գեղեցիկ գրուածքները գրաւում էին Իտալական ամբողջ ընթերցող հասարակութիւնը։

Դէ-Ամիչիսը ծնուել է 1846 թուին, աւարտել Տուրինի գիմնազիոնը և զինուորական ճեմարանը։

Իբրև զինուորական նա մասնակցել է շատ պատերազմների, որոնք բաւական նիւթ են տուել նորան իւր գրական գործունէութեան համար։

1867 թ. սկսած Դէ-Ամիչիսը խմբագրում էր Ֆլորէնցում „Italia militare" թերթը, ուր պարզում էր զօրքի զինուորական պատիժների անիրաւացիութիւնը։ Դը-Ամիչիսի զանազան յայտնագործութիւնները ունեցան մեծ ազդեցութիւն զինուորական պատիժների նոր սիստէմ մտցնելիս իտալական զինուորական կառավարութեան մէջ։ Բազմաթիւ ճանապարհորդութիւնները, որ կատարել էր Դէ-Ամիչիսը զանազան երկրներ, Անգլիա, Իսպանիա, Ֆրանսիա, Տաճկաստան, Մարոկկո և Հարաւային Ամերիկա, ունեցան նոյնպէս մեծ և բազմատեսակ ազդեցութիւն Ամիչիսի գրչի վերայ, որի աշխատութիւնները տարածուեցին Իտալիայի սահմաններից դուրս զանազան երկրներ, իբրև գրաւիչ, գեղեցիկ և հարուստ ներքին բովանդակութեամբ։

—

ԿԱՐԼ ՄԱՅԻՔՍ

Այս տարի լրանում է մահուան 25 ամեակը։ Այս անունը այնչափ ծանօթ է ընթերցող հասարակութեան, որ երկար կանգ առնել նորա գործունէութեան վերայ աւելորդ ենք համարում։

Նորա տէօրիայի մասին կարծիքները շատ բազմատեսակ են. մի բան միայն կարելի է ասել, նա ստեղծեց ամբողջ սիստեմ ներկայ հասարակութեան հիմքը հետազօտելու։ Նա հետազօտեց դրամագլխի տնտեսութիւնը, որի հիման վերայ և ստեղծեց իւր սիստէմը։

Մատերիալիստական հասկացողութիւնը Մարքսի գիտական սիստեմի և գործնական իդէալի հիմնաքարը, նա ինքը հետևեալ կերպով որոշեց իւր Zur kritik աշխատութեան նախաբանում։

«Հասարակական արտադրութեան մէջ, որը ծառայում է կեանքը պահպանելու, մարդիկ մտնում են որոշ անհրաժեշտ, անկախ նրանց կամքից յարաբերութեան մէջ, որոնք համապատասխանում են նիւթական արտադրական ոյժերի որոշ աստիճանին։ Այդ արտադրական յարաբերութիւնների ամբողջութիւնը կազմում է տնտեսական հասարակութեան զանգուած, տեսական (реальный) հիմք, որի վերայ և բարձրանում է իրաւաբանական ու քաղաքական շէնքը և որին համապատասխում են որոշ հասարակական գիտակցութեան կարգեր։ Նիւթական կեանքի արտադրութեան միջոցներով ընորոշւում է սոցիալական, քաղաքական և հոգեկան կեանքի պրոցեսը։

Գոյութիւնը (бытіе) որոշում է ոչ թէ մարդկային գիտակցութիւնը, այլ, ընդհակառակը, նրանց հասարակական գոյութիւնը որոշում է նրանց գիտակցութիւնը։

Իւր զարգացման որոշ աստիճանի վերայ հասարակական նիւթական արտադրական ոյժերը ընդհարումի են հանդիպում գոյութիւն ունեցող արտադրական յարաբերութիւնների կողմից, որոնց շրջանակներում նրանք մինչ այդ ապրում էին—կամ, որ միայն իրաւաբանական արտայայտութիւն է նոյն երևոյթի, սեփականութեան յարաբերութիւնների հետ։ Այն ժամանակ սկսւում է սոցիալական բարեփոխութիւնների շրջանը։»

Այժմ մի փոքր կենսագրական։

Մարքսը ծնուել է 1818 թ. մայիս 5-ին Տրիէր քաղաքում։ Սովորել է Բոնն և ապա Բերլին։

Հրապարակախօսական ասպարէզը սկսեց մի թերթի էջերից։ բայց շուտով ստիպուած էր հեռանալ այդ թերթին մասնակցելուց քաղաքական պատճառներից դրդուած։

Մարքսի գլխաւոր աշխատութիւնը «Դրամագլուխ» ստուար ուսումնասիրութիւն է։ Բրիւսելում նա իւր բարեկամ Էնգելսի հետ գրեց «համայնական հրդվարտակը» (коммунический манифест)-ուր, կարելի է ասել բովանդակուած էր ապագայ մեծ աշխատութեան էական կէտերը։ Վ. Ա.

** ԻՆ

Հնչէ՛ք լարք իմ գալուկ սրտի
Երգը սիրոյ անմեղ կուսի
Ձայնէ՛ք նորան վիշտ իմ խորունկ՝
Եւ դուք երկնից անհոգ թռչունք։

Փչիր և դու մեղմոտ հովիկ
Անուշահոտ բուրմունք ծաղկանց,
Օծիր կուրծքը կուսին հեզիկ՝
Սիրոյ շաղաղ իմ աենչանաց։

Սիրարբ սոխակ, աղուոր երգիչ,
Ողբայ անձայն երգդ սիրտիկ։
Թշուառ և դու իմ բախտակից,
Էր են օրեր մեր դառնալից։

Ինչ փոյթ քեզի սէգ հայուհի,
Անմեղ զոհդ յար տուչորուի.
Սիրոյդ կարօտ, վերքը կրծքում
Սգայ իւր սէր ախուր տրտում։

Մի՛ սաւառնէ լերանց բարձունք
Աւերակաց դու իսկ պատճառ,
Անդ կհալածեն դարձեալ արցունք
Լացկոտ աչաց իմ անդադար։

Ա. Տր-Գ.



ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ

1, Անգլիայի պետական կազմը և քաղաքական կուսակցութիւնները. կազմեց Մ. Բարխուդարեան։

Սա մի լաւ, կոմպիլատիւ, աշխատանք է, գրուած մաքուր և հասկանալի հայերէնով, որի նմանը մենք շատ քիչ ունենք մեր գրականութեան մէջ։ Մ. Բարխուդարեանը նախ պատմում է թէ ինչպէս անգլիական ժողովուրդը ձեռք է բերել իր արդի կառավարութեան ձևը և ինչ հիմունքների վերայ է նա հաստատուած։ յետոյ մենք ծանօթանում ենք անդղիական պարլամենտի և քաղաքական կուսակցութիւնների հետ։ Հեղինակը այդ բոլորի մասին տալիս է ամփոփ տեղեկութիւն, առանց մանրամասնութիւնների մէջ ընկնելու։

Պատմական տեսութեան մէջ մենք դարձնում ենք հեղինակի ուշադրութիւնը մի սխալի վրայ՝ Կարլոսը ստորագրեց ոչ թէ «Իրաւունքների օրէնքը» (բիլ օֆ բայտ), այլ «Իրաւունքների խնդրագիրը» (Փէտիշրն օֆ բայտ)։ «Իրաւունքների օրէնքը» հրատարակուեց—ինչպէս այդ ասուած է և հեղինակի մօտ (էջ 41) —Վիլհելմի ժամանակ։ Ցանկալի կլինէր նոյնպէս, եթէ հեղինակը մի քանի երես նուիրած լինէր նաև մամուլի, խօսքի և ժողովների ազատութեան վերաբերեալ օրէնքներին, ֆինանսական օրէնսդրութեան, գաղութների իրաւական դրութեան և մի քիչ աւելի ուշք դարձնէր տնտեսական հարցերի և երևոյթների վրայ, մանաւանդ պատմական մասում։

Այս բովանդակալից դիրքը մենք առանց տատանուելու յանձնարարում ենք ընթերցողների ամենալայն շրջաններին, մանաւանդ աղգային դպրոցներում ուսանողներին, որոնք դժուարութեամբ են մարսում այդ տեսակի ռսերէն գրքերը։

2, Աւ. Տէր Յարութիւնեան։ Պոշեան եւ նրա գործունէութեան արժէքը։ 1908 Ն. Նախիջևան։

Այս աշխատութիւնը նուիրուած է պ. Մանուկ Աբեղեանցին և ով որ աշակերտել է վերջինիս, նա իսկոյն կնկատի ուսուցչի ազդեցութիւնը իր աշակերտի գրուածքի վերայ։ Սակայն Մ. Աբեղեանը Պերճ Պռոշեանցին վիպասան է ճանաչում, իսկ մեր հեղինակը Պ. Պռոշեանի արժանաւորութիւնը տեսնում է միմիայն նրա ազգագրական նիւթերի և լեզուի մէջ։ Եթէ չենք սխալւում նոյն կարծիքը քանիցս յայտնել է և Պ. Լէօն։ Մենք նրանց համամիտ չենք և ընդհանրապէս կարծում ենք, որ Պ. Պռոշեանցը վիպագրողի իսկական տաղանդ ունէր և իր երկերով կարողացել է կենդանի պատկերներ տալ թէ գործող անձերի և թէ դէպքերի։ Նրա նշանակութիւնը մեր գրականութեան և կեանքի մէջ մեծ է հենց իբրև վիպասան-պատկերահանի, որ կարողացաւ ընթերցողների լայն շրջաններին և մի քանի սերունդներին ծանօթացնել մեր գիւղացու չար ու բարիի, ընտանիքի և հասարակական կեանքի հետ։

Աւ. Տէր-Յարութիւնեանը Պ. Պռոշեանի վէպերը ենթարկում է մանրամասն քննութեան և խնդիրը լուսաբանելու համար մի քանի հետաքրքրական պատմական և քննադատական տեսութիւններ է անում։ Մեր քննադատական ամայի տոպրիզում այս ուսումնասիրութիւնը անշուշտ կունենայ իր որոշ տեղը։

3, Թէոդիկ. Ամէնուն Տարեցոյցը 1908 Կ. Պոլիս։

Վ. և Ն. Տէր-Ներսիսեանների այս օրացոյց — Ալմանախը շատ ոգիտանի և տեղեկութիւններով հարուստ հրատարակութիւն է։ Հետաքրքրուողը կարող է այս Տարեցոյցից քաղել շատ բազմաթիւ տեղեկութիւններ Կ. Պոլսի կեանքի, հիմնարկութիւնների և գործիչների մասին։

Հրատարակութիւնը ունի նաև գրական բաժին և բազմաթիւ պատկերներ՝ Օրմանեան պատրիարքի, յայտնի ամոլ— հեղինակների՝ Հ. և Զ. Աստուրի և այլոց։ Ցաւում ենք, որ այսպիսի հրատարակութիւնը մենք, Կովկասահայերս, չունինք։

Գրագէտ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

[redacted] Փետր. 22-ին Երևանի նահանգապետը անձամբ ներկայանալով կաթողիկոսական տեղապահ ամենայն. Սուրբ Հնեան արքեպիսկոպոսին յայտնում է փոխարքայի որոշումը, որ ճեմարանի տեսուչ պ. Մինաս Բերբերեանը չի կարող հաստատուած լինել իւր պաշտօնում և պէտք է անմիջապէս հեռացուի ճեմարանից։

Ճեմարանի տեսուչը, որ այդ ժամանակ ընտանեկան պատճառով գտնուում էր Ն. Նախիջևանում, կողմնակի աղբիւրից իմանալով այդ մասին՝ շտապում է Թիֆլիս, ուր ստանում է տեղապահի յանձնարարութեամբ գրուած նամակը, որից երևում է, որ տեղապահը խնդրելով հանդերձ նահանգապետից թողնել պ. Բերբերեանին իւր պաշտօնում, իբրև ճեմարանում կարգ և կանոն մտցնող մի կարևոր պաշտօնէի, միևնոյն ժամանակ պատրաստակամութիւն է յայտնում կատարել փոխարքայի հրամանը, եթէ այդ հրամանը անդառնալի է։

Պ. Բերբերեանը իսկոյն և իսկ հարկ համարեց այցելել փոխարքայի գիւանատան կառավարիչ պ. Պէտերսընին և պարզել չհաստատուելու առիթ տուող հանգամանքները։

Շնորհիւ այդ տեսակցութեան, այլ և տեղիս ս. Առաքելոցի և մի քանի անձանց միջամտութեան, կարելի եղաւ այդ հարցին յաջող ելք տալ և այժմ, ինչպէս հաստատ աղբիւրներից գիտենք, պ. Մինաս Բերբերեանի տեսչի պաշտօնը շարունակելը փոխարքայի կողմից ոչ մի արգելքի հանդիպելու չէ այլևս։

Որքան մեզ յայտնի է, պ. Բերբերեանը ճեմարանի տեսուչ է նշանակուած անցեալ 1907 թ. սեպտեմբերին հանգ. Հայրա-

պետի կոնդակով և ըստ մեր ազգային—եկեղեցական աւանդութեան՝ նորան հեռացնելու խնդիրը կարող է յարուցուել միմիայն յաջորդ կաթուղիկոսի օրոք։

Այս գործը կարգի դնելու համար պ. Բերբերեանը հարկաւորուած եղաւ գրեթէ մի ամբողջ ամիս Թիֆլիզում դեգերել և ճեմարանը առանց ղեկավարի թողնել։

Մինչդեռ, մեր կարծիքով, հարկը պահանջում էր, որ ինքը Էջմիածինը ուղղակի կամ Թեմիս առաջնորդի միջոցով դրբաւոր միջամտած լինէր փոխարքայի առաջ գործին բարեյաջող վախճան տալու և կաթողիկոսական իրաւունքները պաշտպանելու համար։

Իվանգօրօգ քաղաքում, «ինչպէս հաղորդում է «Մեր-Ձայնը», վախճանուած բժշկ. Ալ. Տէր-Յարութիւնեանցը իր շարժական և անշարժ կայքը, մօտ 50,000 ր. կտակել է ազգին։

Իր գրադարանը թողնում է Կովկասի հայոց բարեգ. ընկ. օգտին, իսկ անշարժ կալուածք և գումարը իր մահից յետոյ կտակում է Էջմիածնի վանքին, որ պարտաւոր է կալուածքի արդիւնքներից և գումարների տոկոսներից իւրաքանչիւր տարի տալ ցմահ իր քրոջ 600 ր, որը պարտաւոր է խնամք տանել իր մօր մասին մինչև սրա մահը. իսկ եկամուտների և տոկոսների մնացած մասով պէտք է ձեռք բերել իւրաքանչիւր տարի գիւղերում հդեր անհրաժեշտ գեղջկական ինվենտարով այն չքաւոր հայ-լուսաւորչական գեղջուկների համար, որոնք կը ցանկան Ռուսաստանից կամ ուրիշ թագաւորութիւններից տեղափոխուել Թիւրքիայի՝ հայերով բնակուած Վանի, Էրզրումի, Դիարբեքիրի, Մշոյ և Սվազի նահանգները, իսկ եթէ այդ փողերը ինչ ինչ պատճառներով անհնարին կը լինի յիշեալ նպատակի համար գործադրել, այն ժամանակ անշարժ կալուածքների եկամուտը և դրամական գումարի տոկոսները պէտք է աւելացնել դրամագլխին մինչև մի գումար կազմուի, որի տոկոսները բաւական կը լինին Վան քաղաքում իր անունով հայ-լուսաւորչական, 30 հոգուց որ

պակաս, որը երեխայոց համար կառուցանելի որբանոցի հիմնարկութեանը և պահպանութեանը. այդ որբանոցը պէտք է ունենայ և ուսումնարան՝ երեխաներին գրագիտութիւն, գիւղատնտեսութիւն և արհեստներ սովորեցնելու, ուր առարկաների դասաւանդումը պէտք է հայ լեզուով լինի։ Եթէ այս որբանոցի հիմնարկութիւնը թիւրքական կառավարութիւնը չը թոյլատրէ, այն ժամանակ բոլոր եկամուտներն և տոկոսները պէտք է իր անունով իբրև թոշակներ գործադրուեն հայ-լուս. այն երիտասարդների համար, որոնք կաւարտեն Էջմիածնի հայ հոգևոր ճեմարանը և կը ցանկան զանազան գիտութիւններում կատարելագործուել արտասահման բարձրագոյն ուսումնարաններում։ Իր քրոջ ցմահ տրվելիք 600 ռուբլին, սորա մահից յետոյ, պէտք է գործադրուի այս կտակի գ. և դ. կէտերում յայտնած կամքին և կատար ածելը յանձնում է ամենայն հայոց կաթողիկոսին, կ. Պոլսի հայոց պատրիարքի հետ։

Հանգուցեալի քոյր՝ Նատալիա Տիգրանեանցը խնդրել է թէ հանգ. վեհ. կաթողիկոսին և թէ Կ. պոլսի պատրիարքին իր հանգ. եղբօր մարմինը Իվանգորոդից տեղափոխել Թիֆլիս՝ թաղելով կամ Վանքի; կամ իր հօր պաշտօնատեղի ս. Նշան եկեղեցու բակում։

[redacted] Մեր շնորհալի և հռչակաւոր դերասանուհի տ. Հրաչեան դրել է մի մեծահատոր աշխատութիւն՝ իւր յիշողութիւնները մանկական հասակից ի վեր Հայ թատրոնի մասին, որ մատչիր է մօտ օրերս հրատարակութեան տալ։ Գրուածքը ներկայացնում է խիստ հետաքրքրական կարևորութիւն Հայ թատրոնի պատմութեան նկատմամբ։

[redacted] Կ. Պոլսից մեզ գրում են.

«Բերայի աւագերեց յայտնի տ. Յովհաննէս Մկրեանի ստէպ ստէպ հիւանդութիւնը վերջապէս որոշում տուաւ իւր երկու բժշկաց, որ գոնէ երկու ամիս մինչև Զատիկ Եգիպտոս տաք կլիմայի մէջ անցունէ, ուստի տ. հայրը սարսուած եղաւ ճանապարհ ելնել և երթալ՝ ի Գահիրէ զինքը պաշարող հիւան-

դութենէ ապաքինուելու համար. իրեն պաշտօնը ցվերադարձ յանձնուեց Պերայի ս. Երրորդութեան եկեղեցու երաժիշտ քահանայ տ. Յակովբոս Տէլէճէկեանի»։

Գիտնական պ. Կարապետ Կոստանեանը վերադարձել է արտասահմանից և ինչպէս իմացանք հաւատի աղբիւրներից՝ իւր չորսհատորեան ընդարձակ Հայոց եկեղեցական պատմութեան առաջին հատորը այս օրերս կյանձնէ տպագրութեան, մի աշխատութիւն, որի վերայ հեղինակը զբաղ է դրել ամբողջ 20 տարի և որի կարևորութիւնը վաղուց զգալի է մեզ համար։

Պ. Կոստանեանը, երեսնամեայ տեսչական, ուսուցչական, և գրական աշխատութիւնից յետոյ ստիպուած է բնակութիւն հաստատել իւր հայրենի Ալէքսանդրոպոլ քաղաքը՝ նիւթական սուղ միջոցներով ապրելու յուսով։ Այսպէս է վարձատրում Հայոց ազգը իւր լաւագոյն զաւակներին...

Յուսիկ վարդ. Զոհրաբեանը բողոքել է դատարանին «Վտակ» լրագրի Վաղարշապատի թղթակից ապաեկար Թադէոսեանի դէմ զրպարտութեան համար։ Նորան կպաշտպանէ երդ. հաւ. Սենեքերիմ Արծրունին։

Այս օրերս կսկսուի հրատարակուել «Հայրենիք օրաթերթի յաւելուած նոյնանուն շաբաթաթերթը։

Բազուարնակ եղբարք Զախմախչեանները մի օրինակ «Լումայ» նուիրեցին Ալէքսանդրոպոլի Սահականուշեան օրիորդաց դպրոցին։

Ծաղկազարդ կիրակի օրը լրանում է նշանաւոր հրապարակախօս հանգ. Արգար Յովհաննիսեանի չորրորդ տարեդարձը. այդ օրը կըկատարուի վանքի եկեղեցու բակում նորա գերեզմանի վերայ կառուցած շիրմի հանդիսաւոր բացումն ու օրհնութիւնը։

ԴԱՐՁԵԱԼ „ՆՈՐ-ԴԱՐԻ" 25 ԱՄԵԱԿԻ ՄԱՍԻՆ

—

«Լումայ»-ի անցեալ համարում «եկէք, մեր պարտքը կատարենք» խորագիրը կրող յօդուածով մենք յիշեցրինք հայ հասարակութեան, որ ներկայ տարուայ 20-ին լրանում է «Նոր-Դար» լրագրի 25-ամեակը և նորա բազմաշխատ խմբագրի հրապարակախօսական գործունէութեան 35-ամեակը. մի գործունէութիւն, որ սկսուած է Գրիգոր Արծրունու հետ և բաժանուած նորանից վերջին արևելեան պատերազմի միջոցին, որքան մեզ յայտնի է, դաղափարների ընկճարման պատճառով։

«Մշակի» առաջնորդող յօդուածները սովորաբար գրւում էին ինքը Արծրունին և Սպանդարեանը հերթով. վերջինիս մի առաջնորդողը հասարակութեան առանձին գոհունակութեան առիթ էր տուել, սակայն մի քանի օրից յետոյ Արծրունին գտել էր, որ այդ յօդուածը դէմ է իւր ուղղութեան և այդպիսով տարաձայնութիւն էր ծագել այդ երկուսի մէջ։

Այս բանի առաջն առնելու համար տ. Մարիամ Քոչարեանը (բժ. Քոչարեանի կինը), որի մօտ սովորաբար տեղի էին ունենում գրական ժողովներ, առաջարկում է Սպանդարեանին գրել միմիայն քաղաքական հարցերի մասին առաջնորդողներ, բայց վերջինս չկամենալով սահմանափակել իւր գործունէութիւնը այդ շրջանակի մէջ և համարելով իրան վիրաւորուած՝ առաջ եկաւ կատարեալ բաժանում։

Այս ամենը լաւ յայտնի պիտի լինի այն շրջանի մեր գործողներին, պ. Յարոյին, բժ. Քոչարեանին։ Յ. Չիգիանեանին, Յ. Տէր-Գրիգորեանին ևն։

Այնուհետև, ինչպէս մեր անցեալ յօդուածում ասացինք, նա անցաւ «Մեղու» ին և ապա հիմնեց «Նոր-դարը», որի 25 ամեակի մասին է մեր խօսքը հէնց այժմս։

Մեր խմբագրութեան մէջ ստացուել են մի քանի տեղերից նամակներ, որոնցով հարցնում են, թէ ինչպէս պէտք է յաւերժացնել այդ յօբելեանը, ե՞րբ, ո՞ւր և ի՞նչ ծրագրով պիտի կատարուի այն, որ իրանք էլ մասնակցեն ըստ պատշաճին։ Իսկ յատկապէս Բագուից մեզ հարցնում են, թէ ինչ եղանակով կարող են իրանք գործի հրաւիրել պ. Սպանդարեանին, մանաւանդ ազգային ներկայ հրատապ խնդիրների ժամանակ։

Երբ մասնաժողով ու ծրագիր կկազմուի այդ նպատակով, մենք 'ի հարկէ կծանուցանենք մեր թերթի մէջ և մենք հաւատացած ենք, որ ազգային-յառաջադիմական ուղղութեան համակրող հասարակութիւնը գաւառներում էլ ամեն տեղ կմտածէ, թէ ինչ եղանակով պիտի մասնակցեն այդ յօբելեանին։

Մեր ստացած մի քանի տեղեկութիւններից գիտենք, որ իրեն խմբագրին ևս առաջարկներ են եղել «Նոր-դարի» վերսկսելու առթիւ և արդէն պատրաստութիւններ են տեսնում, որ մօտերս թերթը լոյս տեսնի։

ԳՈՒՏ Ա. Ք. ԱՂԱՆԵԱՆ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Յունվարի 25-ին, «Աղբիւր»ի 25-ամեակը լրանալու օրը, նոյն ամսաթերթի խմբագրատանը ժողովուած հասարակութիւնը՝ բաղկացած գլխաւորապէս «Աղբիւր»ի աշխատակիցներից, ինչպէս նաև պատուաւոր հիւրերը յանձնարարեցին բժշկ. Բ. Նաւասարդեանին հրաւիրել յատկապէս մի ժողով՝ խորհրդակցելու համար, թէ ինչպէս տօնել «Աղբիւր»ի 25-ամեայ յօբելեանը։

Բ. Նաւասարդեանը կատարեց իւր վրայ դրած պարտաւորութիւնը, հրաւիրելով առաջին մասնաւոր հիւանդանոցում

մի բաղմամարդ ժողով, որին և նախագահումէր ինքը, իսկ քարտուղարն էր բժշկ. Ա. Շիսեան։

Ժողովը վճռեց՝

1) Աչքի առաջ ունենալով «Աղբիւր»ի կատարած օգտաւէտ և բեղմնաւոր դերը հայ մանուկների դաստիարակութեան ասպարիզում 25 երկար տարիների ընթացքում,—տօնել արժանավայել կերպով «Աղբիւր»ի յոբելեանը, որի համար և ընտրել մի յանձնաժողով։

2) Քանի որ այսօր հայ գրական հրապարակի վրայ գրուած է արդէն Լէօի յոբելեանը, յանձնաժողովը սկսի իր գործունէութիւնը այդ յոբելեանից յետոյ, այն է սոյն թուի մայիսի 4-ից յետոյ։

3) «Աղբիւր»-ի յոբելեանը տօնել սոյն թուի աշնանը, իսկ թէ ո՞ր ամսի ո՞ր օրը,—թողնել յանձնաժողովի հայեցողութեանը։

4) Յանձնաժողովը դլխաւորապէս պիտի ջանայ ոյժ տալ յոբելեանի նիւթական կողմին, քան հանդիսական, որպէս զի կարելի լինի պատշաճաւոր կերպով ապահովել «Աղբիւր»-ի ծշտատև դոյութիւնը։

Ժողովը միաձայն ընտրեց յոբելեանական յանձնաժողովի համար հետևեալ անձերին՝ Իշխանուհի Սոֆիա Աբղութեան—Երկայնաբազուկ. ա. տ. Հեղինէ Առաստամեան, Յուլիանէ Սպէնդիարեան, պ. պ. Գ. Բարխուդարեան, Գ. Բաշինջանեան, Ա. Մելիք-Աղարեան, Ի. Յարութիւնեան, բժշկ. Բ. Նաւասարդեան, Նար-Դոս. բժշկ. Ա. Շիսեան, Յ. Սպենդիարեան, Յ. Սոլոմեան և Ա. Քալանթար։

Յանձնաժողովն իրաւասութիւն ունի զօրացնելու իր կազմը, ըստ իր հայեցողութեան, և այլ անձերով, երբ այդ հարկ համարէ։

Փետրուարի 29-ին յանձնաժողովն ունեցաւ իր առաջին նիստը և նախագահ ընտրելով բժշկ. Բ. Նաւասարդեանին, իսկ քարտուղարներ՝ Նար-Դոսին և բժշկ. Ա. Շիսեանին, զբաղուեց իր առաջիկայ գործունէութեան ծրագրով։

Նախագահ՝ Բժշկապետ Բ. Նաւասարդեան։
Քարտուղարներ՝ Բժ. Ա. Շիսեան, Նար-Դոս։

ՍՏԱՑՈՒԱԾ ԳՐՔԵՐ

Բարգէն վ. կաթուղիկոսական ընտրութիւն և կանոններ. Վաղարշապատ 1908. 40 կ.

Հրատ. Բագուի Հայոց կուլտ. միութեան.—մանր վարկի հատատութիւնները. Բագու 1908. 5 կ.

— Ցրինի, Բագու 1908, 5 կ.

Ա. Տէր-Յարութիւնեան. Պոշեան և նրա գրական գործունէութեան արժէքը. Ն. Նախիջևան 1908 գ. 25 կ.

Մ. Բարխուդարեանց. Անգլիայի պետական կազմը և քաղաքական կուսակցութիւնները, Մոսկուա 1908 1 ռ.

Ծրագիր Հայոց ազգագրական Թանգարանի համար նիւթեր հաւաքելու· հրատ. Հ. ազգ. ընկ. Թիֆլիզ 1908.

Աստուած բնութեան մէջ, թարգմ. Գրիգոր ա. ք. Գրիգորեանց. Բագու 1908. 10 կ.

Բժ. Սիմէոն Շահնազարեան. Սեդրակ Մանդինեանը իբր տեսուչ Երևանի Հայոց թեմական Հոգևոր Դպրանոցի. Մոսկուա 1907 50 կ.

—բանաստեղծ քաղաքացին դպրոցական նուիրական ուխտի ասպարէզում, Մոսկուա 1908 10 կ.

Բժ. Բ. Աղասարեան, Ազգի գոյութեան մեծ խնդիրը, Ս. Պ. Բ. 1908 10 կ.

Համառօտ հաշիւ մտից և ծախուց Կոջորի Հայոց ս. Կարապետ եկ. 1907 ամի. Թիֆլիս 1908։



Խմբագիր-հրատարակիչ՝

ԳԻՒՏ Ա. Բ. ԱՂԱՆԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՐԱՐԱՏ

Ս. Էջմիածնի Հայրապետական աթոռի պաշտօնական

ԱՄՍԱԳԻՐ

Կհրատարակուի պաշտօնական—կրօնական—եկեղեցական և մանկավարժական—գրական—բանասիրական բաժիններով։

Բացի մեր հին աշխատակիցներից այս տարուայ ընթացքում «Արարատի» յառաջադիմութեան անմիջապէս կմասնակցեն Մ. Աթոռի կարող միաբաններն ու ճեմարանի ուսուցչական խումբը իւր ստուար մասով։

Բաժանորդագինն է Ռուսաստանում 4 ր. Արտասահմանում 5 ր.։

Մեր հասցէն՝ Св. Эчміадзинъ, ипографическому Комитету.
Արտասահմանի համար՝ Rdaction de a Revue „Ararat"
Etchmiadzine (Caucase)

ԱՂԲԻՒՐ № 2. բովանդակութիւն

Հայկական գեղագրութիւն.
Նապաստակի տունը (4 պատկերով). Ա.Թ. Խնկոյեան.
Եօթը եղբայրների քոյրը, հէքիաթ (պատկերով). Արքայիկ.
Գեղջուկն ու վարժապետները. Յ. ք. Ճուղուրեան.
*** Բանաստեղծութիւն. Յ. Պետրոսեան.
Վարագոյրի ետևում (պատմուածք). Յ. Սոլովեան
Մեր ճամբէն, բանաստեղծութիւն. Շահէն.
Մոցարտի կեանքից՝ Բիմբէոլի (3 պատկ.). Զ. Տ. Գ.
ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹԻՒՆԻՑ
Հէքիաթ և երևակայութիւն. Տ. Ռաշմաձեան.
———
ԿՈՉ Լ. Տոլստոյի յօբելեանի մասնաժողովից (պատկերով).
Դէպի ուր. Տ. Նազարեան
Աղբիւրի 1 տարեայ զեկուցումը—Տ. Ն.
ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ
Լ. Տոլստոյի յօբելեանը։ «Նոր դպրոց»։ Կովկ. Հ. Բար.
Ընկ.Գրականագէտ. և լրագրողների ընկ.։ Լէօի քսանհինգամեակը։
ՆՈՐԱԳՈՅՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ
ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ.
Համալսարաններն ու ուսանողները Եւրոպայում.
ԱՂԲԻՒՐԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ



Շարունակւում է

ԱՂԲԻՒՐԻ ԵՒ ՏԱՐԱԶԻ

1908 Թ.

ԿԱՆԽԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Տարին 10 ր., արտասահման 50 ֆր.

Հասցէն. Тифлис, Редакція АГБЮР *կամ* ТАРАЗ. Tiflis, Rédaction Agbhür *կամ* Taraz.

ԲԱՑՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
1908 Թ.

ԼՈՒՄԱՅ

ԳՐԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ ԵՒ ՀԱՆՐԱՅԻՆ
ԱՄՍԱԳԻՐ

Վերսկսելով «ԼՈՒՄԱՅ»-ի կանոնաւոր հրատարակութիւնը խմբագրութիւնը յայտնում է իւր ընթերցողներին, որ

1, Բաժնեգինը իջեցնում է 6 ռուբլու։

2, Անպայման ընդունւում է միայն կանխիկ բաժանորդագրութիւն, որովհետև մենք բարւոք ենք համարում թէկուզ 100 բաժանորդ ունենալ և վճարած, քան 1000 և ապառիկ՝ երկար տարիների ընթացքում։ Ոչ մի ապառիկ պահանջ չի կարող կատարուել խմբագրութեանս կողմից, ում կողմից էլ լինի այդ։

3, Երբ բաժանորդների թիւը 500-ից անցնի՝ Խմբագրութիւնս կձեռնարկէ ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎԵԱՆԻ «ՎԷՐՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ»-ի տպագրութեան, որ և ձրի կուղարկուի բոլոր վճարող բաժանորդներին։

4, Խնդրում ենք մեր թերթի ուղղութեան բոլոր համակրողներին տարածել «ԼՈՒՄԱՆ» և մեզ միջոց տալ աւելի ընդարձակել հրատարակութեան գործը։

Խմբ.-Հրատ. ԳԻՒՏ Ա. Ք. ԱՂԱՆԵԱՆՑ

1908 Թ. ՄՈՍԿՈՒԱՅՈՒՄ

կսկսուի հրատարակուիլ

ՄԱԿՈՅԿ

ԳՐԱԿԱՆ ԵՒ ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒ

«ՄԱԿՈՅԿ»-ը կհրատարակուի՝ տարուայ ընթացքում երկու հատորով։ Իւրաքանչիւր հատորը բաղկացած կլինի գրական և գեղարուեստական բաժիններից։

Գրական բաժինն ևս զարդարուած կլինի պատկերներով, իսկ գեղարուեստական բաժինն՝ իբրև յաւելուած—այլբոմ կբաղկանայ բազմաթիւ գունագեղ նկարներից

«ՄԱԿՈՅԿ»-ի արտաքին դիրքը կլինի մեծադիր՝ քառածալ, մաքուր տիպ՝ մօտ 250-300 երես—(այլբոմը չհաշուած)։

«ՄԱԿՈՅԿ»-ը լոյս կտեսնի բաժանորդագրական պայմաններից անկախ։ Գրքերը կգնահատուին տպագրութիւնից յետոյ՝ համաձայն տպագրական ծախքերի։

«ՄԱԿՈՅԿ»-ի առաջին գիրքը լոյս կտեսնի մարտ ամսի ընթացքում, երկրորդ գիրքը՝ հոկտեմբերին։

«ՄԱԿՈՅԿ»-ը կխմբագրուի իւր աշխատակիցների միահամուռ մասնակցութեամբ։

Նիւթերը պէտք է ուղարկուին Արշակ Կայծունուն։

Հասցէն՝ Москва, Кузнецкій пер., д. Хомякова „Тулонъ“ № 10

Շարունակվում է բաժանորդագրութիւն

ՄՇԱԿ

Քաղաքական եւ Գրականական լրագրի

ԱՌԱՋԻԿԱՑ 1908 ԹՈՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

(36-րդ տարի)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակ»-ի տարեկան գինը 10 ռուբլի։

Մ ա ե ր ի կ ա յ ի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դոլլար. Ե ւ ր օ պ ա յ ի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պ ա ր ս կ ա ս տ ա ն ի բաժանորդները՝ 10 ռուբլի։

«Մշակ»-ին գրուել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ. (Բազարնայա և Բարօնսկայա փողոցների անկիւն)։

Մեր հասցէն Тифлисъ, Редакція «МШАКЪ». արտասահմանից Tiflis Rdaction du journa «Mschak».

Բացուած է 1908 թ. բաժանորդագրութիւնը

ՀԱՍԿԵՐ

մանկական պատկերազարդ ամսագրի

Ամսագիրը լոյս է տեսնելու Թիֆլիսում 32—48 երեսանոց մեծադիր գրքոյկներով նախկին ընդարձակ ծրագրով Մշտական աշխատակցութեամբ ՅՈՎՀ. ԹՈՒՄԱՆԵԱՆԻ

Ամսագիրը ունի նաեւ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ ուր շոշափւում են ընտանեկան կրթութեան վերաբերեալ հարցեր։

Տարեկան. ՀԱՍԿԵՐ մանկ. բաժին 3 ռ. մանկավարժ. բաժնով 4 ռ.
Արտասահմանում տարեկան. 9 ֆր. . 12 ֆր.

հասցեն՝ Թիֆլիս, Բեհբութեան փող. 25. (Тифлисъ Редакція журнала «Аскеръ», կամ Tiflis (Caucase) Rédaction du journ. «Hasker»։

Խմբագիր—Հրատարակիչ՝ Կաս. Լիսիցեան

որ լոյս է տեսնելու այս գարնան աշխատակցութեամբ՝ Ա. Ահարոնեանի, Ա. Աբեղեանի, Ե. Թոփչեանի, Յովհ. Թումանեանի, Յ. Թադէոսեանի, Ա. Իսահակեանի, Գ. Խաժակի, Սիմ. Յակոբեանի, Միք. Յովհաննիսեանի, Լ. Նազարեանի, Յ. Շահպազեանի, Ս. Շխեանի և ուրիշների։

Գեղարուեստ

ԳՐԱԿԱՆ ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ

Պատկերազարդ հանդէս

(Ամսագիր)

«Գեղարուեստի» գիրքը լինելու է մեծադիր, քառածալ (in quarto), նման եւրոպական գեղարուեստական առաջնակարգ հանդեսներին. ծաւալը իւրաքանչիւր գիրքը 100 երես երկէջեան. առանձին եղող նկարները գունաւոր. կլիշեները պատրաստւում են Լայպցիկում և Պետերբուրգում. Թուղթը ընտիր տեսակի, տպագրութիւնը կարելւոյն խնամքով և շքեղ:

Աշխատակիցների անպայման վարձատրութիւն

Տարեկան բաժանորդագինը 10 բուբլի:

Արտասահմանի բաժանորդների համար 30 ֆռանկ:

Կարելի է վճարել մաս-մաս. իւրաքանչիւր գիրքը հատավաճառ 1 բուբլի 50 կ.

Օտար քաղաքներից՝ Тифлисъ, Редакціи «Гехарвестъ»,

Խմբագիր-հրատարակիչ՝ ԳԱՐԵԳԻՆ ԼԵՒՈՆԵԱՆ

Բացւած է 1908/9 թ. բաժանորդագրութիւնը

(Այս տարւայ մարտից մինչեւ 1909 թ. մարտը)



ԹԱՏԵՐԱԿԱՆ-ԳՐԱԿԱՆ-ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ

պատկերազարդ երկշաբաթաթերթի

(Բ. ՏԱՐԵՇՐՋԱՆ)

ԲԱՑԻԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ 1908 Թ.

ՀՈՎԻՒ

Ազգային, հասարակ. և գրական շաբաթաթերթի

(ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ { Տարեկան . . 4 ռուբլի։
Կէս տարուան . 2 ր. 50 կ.

Ապառիկ բաժանորդագրութիւն չէ ընդունւում

ԿԱՐԵԼԻ Է ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒԵԼ.

Թիֆլիսում—խմբագրատանը՝ Большая Ванкская № 16. Կայսերութեան այլ քաղաքներից—դիմել՝ Тифлисъ, Редакція «Овивъ» Արտասահմանից՝—Redaction «Hovive» Tiflis—Gaucase, Russie։

Խմբ.-հրատ.՝ Եղնիկ ա. ք. Երզնկեանց

Այն բաժանորդները, որոնք կարող են մեր թերթն անմիջապէս փոստից ստանալ, թող հաճին յայտնել իրենց հասցէները։

Բացուած է բաժանորդագրութիւն 1908 թ. համար

ՄԵՐ ԶԱՅՆ

Հասարակական, գրական եւ բաղաքական օրաթերթ

Հրատարակւում է Նոր-Նախիջևանում շաբաթն առ այժմ 3 անգամ չորեքշաբթի, ուրբաթ և կիրակի օրերը

Թերթի մէջ կը զետեղուեն հասարակական գործիչների ՊԱՏԿԵՐՆԵՐ, կարևոր ՆԿԱՐՆԵՐ և ԾԱՂՐԱՆԿԱՐՆԵՐ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է

Տարեկան Նոր-Նախիջևան և Ռոստով 5 ր., դուրսը 6 ր., կէս տարուանը 3 ր., երեք ամսուանը 1 ր. 50 կ., ամիսը 50 կ., հատը 7 կոպ.։ Արտասահման 10 ր.։

Յայտարարութեան իւրաքանչիւր տողատեղը առաջին երեսում 20 կոպէկ, չորրորդ երեսում 10 կոպէկ։

Հասցէն փոխելու համար 25 կոպէկ։

Օտար տեղերից դիմել՝ Нахичеванъ на-Дону. ред. „Меръ Дзайнъ“, իսկ արտասահմանից՝ Nachitchevan s-Don, Russie, Redaction „Mer Dzain“.

Բացուած է բաժանորդագրութիւն

Վ Տ Ա Կ

Հասարակական, Քաղաքական, Գրական, Տնտեսական Օրաթերթի

	1տ.	11ա.	10ա.	9ա.	8ա.	7ա.	6ա.	5ա.	4ա.	3ա.	2ա.	1ա.
Ռուսաստ.	8ր.	7,50	7ր.	6,50	5,50	4,50	4ր.	3,50	3ր.	2,25	1,50	80կ
Արտասահ.	12ր.	11ր.	10ր.	9 ր.	8ր.	7ր.	6ր.	5ր.	4ր.	3,50	2,40	1,20
Գտրսկաս.	9ր.	8,50	8ր.	7,50	7ր.	6ր.	5ր.	4,50	4ր.	3ր.	2ր.	1ր

Տարեկան բաժանորդները կարող են վճարել մաս-մաս, յունուարին 4 ր., մարտ. 2 ր. և յունիսին 2 ռուբլի։

ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԸ բացի օրաթերթից կստանան և մի ՁՐԻ յաւելուած (200—300 մեծադիր երես)։

Գրական-գիտական ժողովածու

Բաժանորդագրութիւնն ընդունն. է խմբագրատունը Ванкская, № 6.
» » «Փարոս» կոօպկում Эриванская пл.
» » «Գուտտենբերգ» գրավ.—Эрив. пл.

Այլ տեղերից դրամ փոխադրել անպայման հետևեալ հասցէով. Тифлисъ, почт. ящ. № 23 Левону Абовьянцу.

ԲԱՑՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԽԱՐԱԶԱՆ

Շ ա բ ա թ ա թ ե ր թ ի

Բաժանորդագրութիւն վեցամսեակով և վեցամսեակի ընթացքում միանուագ եւ մաս-մաս վճարող բաժանորդները կստանան։

25 համար շաբաթաթերթ (պատկերազարդ).

6 գրքոյկ պատկերազարդ, այն է՝

1) Նախապատմական կեանք. 2) Հայերի հայրենիքը կամ Ուրարտու. 3) Լեհաստանի հայեր. 4) Լեւոն Զ. հայոց թագաւոր. 5) Միքայէլ Նալբանդեան. 6) Մանկական գիրք։

Եթէ բաժանորդների թիւը հասաւ 1000-ի ամեն մի բաժանորդ կստանայ ձրիաբար «Հայաստանի քարտէզը»։

Բաժանորդագին

Վեցամսեակ—1 ռուբլի. կոպ.			Արտասահման	1 ռուբլի 50 կ.
Եռամսեակ	«	«	50	1 ռուբլի
Ամիսը	«	«	20	« 50 կ.

Բաժնեգինը կարելի է դրկել նամակադրոշմներով (մարկա)։

Հասցէն՝ Тифлисъ, Михайловская ул. Церковный домъ. № 38 Хачатуру Теръ Маркарянцу.

2—2.

ԴԻՒՑ Ա· ՔԱՀ. ԱՂԱՆԵԱՆՑԻ

աշխատութիւնները·

1 Աղօթատետր Ե. տպ. 1903. . . . . — 10
2 Կրօնի դասագիրք տ. տ. 1889 (սպառուած) . . . . . — 15
3 » » բ. տ. դ. տպ. 1891 . . . . . — 25
4 » » դ. տ. դ. տպ. . . . . — 25
5 Տօմար և տօնացոյց Հայաստ. եկ. բ. տպ. 1894 . . . . . — 50
6 Կարնոյ գաղթը. պատմական տեսութիւն. 1891 . . . . . — 10
7 Դիւան Հայոց պատմութեան. գիրք Ա.—Բ. 1780—1834 Սահակ-Մեսրոպեան մրցանակին արժանացած 1893 . . . . . 2 —
8 Նոյն. գիրք Դ. Սիմէօն կաթողիկոսի յիշատակարանը կենսագրութեամբ, յաւելուածներով ու ծանօթութիւններով, Սահակ Մեսր. մրց. արժ. 1894. . . . 7 —
9 Նոյն. գիրք Դ. Ղուկաս կաթող. 1780—1800. 1899. . . . . 4 —
10 Նոյն. գիրք Ե. Դանիէլ կաթ. 1800—1808. 1902. . . . . 4 —
11 Նոյն. գիրք Զ. Դաւիթ կաթ. մ. I. 1801—2. 1904 . . . . . 4 —
12 Նոյն. գիրք Է. Դաւիթ կաթ. մ. II. 1803—4 1908. . . . . 4 —
13 Նոյն. գիրք Ը. Սիմէոն Կաթող. մ. II. 1767—1776. 1908 . . . . . 4 —
14 Կարդ ատուածպաշտութեան Հայաստանեայց ս. եկեղեցւոյ 36 նկարով, Զ. տպ. 1907 — 50
15 Հնից-նորից, հնախօս. ուղեոր. պրակ Ա. 1900. . . . . — 30
16 Պատի օրացոյց 1902 ամի. ժամանակագր. ԺԴ տարի. . . . . — 50
17 Նամակագիրք 1902 . . . . . — 50
18 Ծոցի օրացոյց 1902 ամի և յաւելուած.—Առողջապահական խոհարարութիւն.. . — 15
19 Զաքար Ղարդաճեանցի կտակը և Մշակի զառանցանքները (սպ.). . . . — 50
20 Եկէք մեր պարտքը կատարենք. 1908 . . . . . — 50

Թարգմանութիւններ

21 Հաւատարմութիւնը ամէն աղէյքների յաղթում է Ֆ. Հոֆմանի 1877 . . — 40
22 Խաւարից դէպի լոյս Ֆ. Հոֆմ. 1888 (սպ.) . . . . . — 40
23 Դօն Քիշոտ լամանշեցի, Մ. Սէրվ. 1878 (սպ.) . . . . . — 70
24 Գէորգ Ռօլլէստոն, 1879 (սպառ.) . . . . . — 60
25 Երրորդ ոսկի, առակ. Լակիդէի բ. տպ. 1893 . . . . . — 10
26 Ռոբինզ օն (հրատ. Թիֆլ. տպագր. ընկերութ.) (սպ.) . . . . . — 60
27 Զէոտէրտօնի ժառանգը, պատկերազարդ, 1882. (սպ.). . . . . 1 —
28 Ակտէա. տ. Սիսոեվայի. 1885 (սպառ.) . . . . . — 50
29 Եան Էրնստ Սմօլեար. Ն. Եանչուկի, 1885 (սպ.) . . . . . — 20
30 Արծուի մատմունքը, պրոֆ. Մ. Բողդան. 1892. . . . . — 5
31 Դիւղի սուրբը. Սվեատ. Զէրի, 1892 . . . . . — 10
32 Կեանքի դպրոցը, Դիկկէնսի, 1892. . . . . 1 —
33 Դէպի Աթէնք, Հ. Սենկեվիչի բ. տպ. 1901 . . . . . — 15
34 Մի կտոր հաց, Պոտապէնկոի բ. տպ. 1901 . . . . . — 10
35 Որսորդ, Օ. Շրայների . . . . . — 10
36 Մատուռի աւերակներում, Օ. Շրայների. . . . . — 10
37 Կարա. Իբլանդական զրոյց 1904 . . . . . — 5
38 Անտառապետ Ֆրեդերիկ. Էրրիման Շատրիանի. 1903 . . . . . — 40
39 Տնային բժշկարան, պրակ Ա. (գրքի ամբողջ կէսը) . . . . . 1 —
40 Նոյն պրակ. Բ. գրքի ամբ. կէսը 1 60

Հրատարակութիւններ

41 Ի. Յարութիւնեան, Հայոց դիրը 1893 . . . . . 1 50
42 Իշ. Կ. Բեհբուդեան, Ծուխ. 1893 . . . . . — 15
43 Ռանդարէ, Էմաէ, վէպ թարգմ. Յ. Լալայեանի . . . . . — 25
44 Ալբէր Այնօ, Քուրդի լեռն, 1894 . . . . . — 20
45 Ճաղարբէգեան Յ. Հայոց. լեզու ա. տ 1904 . . . . . — 30
46 Խրիմեան Հայրիկ, Ժամանակ 1895 . . . . . — 15
47 Սպիրի, Այծարած Մօնի 1885 . . . . . — 15
48 Բակ. (Բարդէն վ.) Կիլիկիա 1896 . . . . . — 10

49 Եստալոցցի, Լինհարդ և Դերարուդ. 1896 . . . . . 1 50
50 Պելքեսեղեկ արքայ. Մուրատեան Պետրոս Շանշեան պատկերով. 1897 . . — 50
51 Թ. Ա. Խոհարարուհի, բ. տպ. ճոխացրած 1904 . . . . . — 50
63—62 Լումայ, գրական հանդէս 1891—1901 իւր. գիրքը . . . . 2 —
66—5 Լումայ երկամսեայ հանդէս 1902—1904 տարեկան. . . . . 6 —
68—7 Լումայ ամսագիր 1095—1906 իւր. տար. . . . . 8 —
69 Լումայ ամսագիր 1907 2 գիրք. . . . . 2 —
70 Լումայ ամսագիր 1908 տար . . . . . 6 —
71 Յ. Պարոնեան, Միծաղ, պատկերով, 1899 . . . . . 1 25
72 » Արևել. առաքինաբոյժ կատակ. 1901 . . . . — 50
73 » Քաղաքավար. ՀՕասները, 1901 . . . . . — 75
74 Ստեփանոս Պալասանեան . . . . . — 25
75 Ն. Տէր-Կարապետեան, Խաչատուր Աբովեան (սպառ.) . . . . — 60
76 Աշակերտի յուշատետր . . . . . — 30
77 Զգացմունքների աշխարհ. . . . . — 30
78 Յարութիւն Թումանեան, Մելիք-Իսսուփ . . . . . — 25
79 Մ. Եօկայի, Ուրացողը, ... — 20
80 1901 Ս. Էջմիածնի ԺԶ դարադարձը. . . . . — 25
81 Եր. Շահազիզ, Մկրտիչ Էմին . . . . . — 66
82 Կարալենկո, Կոյր երաժիշտը. թարգմ. Մուշէ վարդ. . . . . — 20
83 Զորբարդ դարու հայ եկեղեցին . . . . . — 40
84 Եր. Շահազիզ, Նոր-Նախիջևանի ս. Խաչ վանքը . . . . . — 20
85 Իմ օրագիրը . . . . . — 25
86 Մեծ Ներսէս . . . . . — 60
87 Դ. Խաչկոնց, Հայոց կրօն. քանաստեղծութիւնը . . . . . — 10
88 Կին վիպագիր Ե. Սպերի . . . . . — 5
89 Օր. Ն. Աղանեանց, (թարգմ.) Սև հացեր, բ. տ. . . . . — 40
90 Կարալենկո, Դատաստանի օրը. թարգմ. Մուշէ վարդ. . . . . — 20
91 Կ. Կոստ. Շարժի տարեգրութիւնը Հայոց մէջ. 1902 . . . . . —
92 Գ. վ. Յովսէփեան, Մանրանկարչութեան արուեստը. Հայոց մէջ 1902 . . . — 25
93 Ներսէս Մեծի յաղօրդներ 1902 . . . . . — 20
94 Մ. Գոյրկի. Զէլկաշ. թարգմ. Մուշէ վարդ. . . . . — 15
95 Քուչակ Նահապետի երգերը, Յով. Թաղ. . . . . — 25
96 Սահակ Պարթև . . . . . — 5
97 Ապուշը, ժօրժ Էսպարբի, թար. օր. Ն. Աղանեանց, բ. տ. . . . . — 5
98 Վարժապետը. թարգմ. Լ. Մ.-Ա. . . . . — 30
99 Հաղարան Բլբուլ. Յ. Թումանեանց . . . . . — 50
100 Պատմական պատկերներ, Եր. Շահազիզ 1903 . . . . . — 50
101 Ժ. Ժ. Ռուսսո. Էմիլ. 1. թ. Իս. Յարութիւնեան 1904 . . . . . — 60
102 Խարէն արք. Դալֆայեան և Նալբ. Աղցմիքը, Եր. Շահ. 1904 . . . . — 50
103 Հերոստրատ. Լ. Ֆուլդալի, թարգմ. Տ. Վ. 1904 . . . . . — 50
104 Կանոնք ժսլովոց. Մ. Ա. 1904 . . . . . — 5
105 Ուղեղի նորոգումը. Ֆ. Դիկմելի թ. Օր. Ն. Աղան. 1904 . . . . . — 5
106 Գիթուիթին » » 1904 . . . . . 1 25
107 Գ. Ե. Սրուանձտեանի երկերը 1 Համով-հոտով 1904 . . . . — 50
108 Ալէմդիր. վէպ Վ. Փափազեանի, 1904 . . . . . — 10
109 Սուտի հոգեբանութիւն. Դար. Ենդ. 1904 . . . . . — 75
110 Հայրեր և զաւակներ Ի. Տուրգ. թ. Մուշէ վ. 1904 . . . . . — 15
111 Կօնան Դոյլ. Բանակն ինչպէս ազատեցի. թ. Տ. Վ. 1904. . . . . — 50
112 Ազէրֆէզա. վէպ Վ. Փափազեանի, 1904 . . . . . — 30
113 Ֆր. Դրկիւբէլ. Նոր Կուռք, թարգմ. Տ. Վ. 1905 . . . . . — 40
114 Կար. Եղեան. Ս. Էջմ. Մ. Ա.թ. և Ռուսաց կառ. յարաբերութիւնների ծաղումը. 1905 . . . — 60
115 Զ. Ռիչարդսօն. Դիքերի ընտրութիւնը թարգմ. Բենիկ վարդ. 1905 . . . — 20
116 Իտալմ. տաճկ. թարգմ. Գր. Եղ. 1905 . . . . . —
117 Հոդեկան վարակումն և նրա նշանակութիւնը. բժշկ. Կ. Աղաջանեանց 1905 . . — 1
118 Խանդաղէ, մեր արիւնտ անցեալից 1907 . . . . . — 20
119. Ժ. Ժ. Ռուսսո. Էմիլ. II 1906 . . . . . — 50

պատկերներ

120 Ս. Լուսաւորչի իւղաներկ մեծադիր պատկեր . . . . . 3 —
121 Նոյեր կտաւի վերայ . . . . . 15 —
122 Պետրոս Շանշեան . . . . . — 10
123 Յակոբ Պարոնեան . . . . . — 10
124 Աբգար Յովհաննիսեան. . . . . — 10
125 Աւետիք Ղուկասեան . . . . . — 10
126 Գարեգին եպս. Սրուանձտեանց . . . . . 5 —
127 Լումայի պոստկարտ. . . . . —

ԴԻՒԱՆ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

ԺՈՂՈՎԱԾՈՒ ՊԱՏՄՈՒԱԾՔՆ ՎԱՒԵՐԱԳՐԵՐԻ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԳԻՒՏ Ա. ՔՀ. ԱՂԱՆԵԱՆՑ

(Սկսուած է հրատարակուիլ 1893 թուից)

Մինչև այժմ լոյս են տեսել հետևեալ հատորները

Գիրք Ա.—Բ. ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԱՆՑԻՑ 1780—1834 ԵՒ ԾԱԳՄԱՆ ՍԻՒՆՀՈԴՈՍԻ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ։

« Գ. ՍԻՄԷՈՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ մասն I. Սիմէոն Կ. ընդարձակ կենսագրութեամբ, յաւելուածներով և ծանօթութիւններով։

« Դ. ՂՈՒԿԱՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ. մասն I. 1780—1800 կենսագրական յօդուածով, յաւելուածներով և ծանօթութիւններով։

« Ե. ԴԱՆԻԷԼ ԿԱԹՈՂԻԿՈՍ 1800—1808. յաւելուածներով և ծանօթութիւններով։

« Զ. ԴԱՒԻԹ ԿԱԹՈՂԻԿՈՍ. մասն I. 1801—2. յաւելուածներով և ծանօթութիւններով։

« Է. ԴԱՒԻԹ ԿԱԹՈՂԻԿՈՍ, մասն II. 1803—4. յաւելուածներով և ծանօթութիւններով։

« Ը. ՍԻՄԷՈՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ մասն II. 1767—1776։

Բոլոր հատորներին կից՝ լուսանկար պատկերներ, վիմատիպ կոնդակներ կամ ֆիրմաններ, նկարներ և այլն։

Պատրաստ են տպագրութեան համար և սպասում են բարերարների նպատին

Գիրք Թ. ՄԱՆՐ ՄԱՏԵՆԱԳԻՐՔ ԺԶ—ԺԸ ԴԱՐՈՒՑ։

1. Գաղթ Սենեքերիմայ Արծրունոյ 'ի Սեբաստիա։—2. Յաջորդութիւնք կաթողիկոսաց Հայոց։—Սիմէոն Ռշտունցի։—4. Թովմայ Միհնասեանց։—5. Յովհաննէս Սրճիշեցի։—Բարսեղ Վարագեցի։—6. Ինչ ինչ ժամանակագրութիւնք։—7. Դուիթ Բաղիշեցի։—8. Գրիգոր Վարագեցի։—9. Մեծն Վարդան Բաղիշեցի։—10. Բարդուղիմէոս Շուշանցի։—11. Անցք Վասպուրական աշխարհի։—12. Պատմութիւն մեծ սովոյն Տիգրանակերտի։—13. Վարք Յովհաննէս Աղտար Մոկացւոյ։—14. Վէպ զպարսից։—15. Յաջորդութիւնք վանայ Բդեշխից։—16. Պատմութիւն աւերման Փայտակարան մայրաքաղաքի։—17. Պօղոս Կաղզուանցի։—18. Յարութիւն Խալֆայեան։—19. Իսահակ Սահրատեան։ 20. Յովհաննէս Շահխաթունեան։—21. Յովհաննէս Սեբաստացի։—22. Ղևոնդ Տոպչից։—23. Պատմ. Կարապետի որ 'ի Մուշ։ Ղազար Արևելցի։

Գիրք Ժ. ՍԻՄԷՈՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ մասն III և վերջին։

« ԺԱ. ՂՈՒԿԱՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ մասն II.

« ԺԲ. « « « III.

« ԺԳ. « « « IV.

« ԺԴ. ՅՈՎՍԷՓ ԱՐՂՈՒԹԵԱՆ մ. I.

« ԺԵ. ԵՓՐԵՄ ԿԱԹՈՂԻԿՈՍ « I.

« ԺԶ. ՄԱՆՈՒԷԼ ԿԻՄԻՒՇԽԱՆԵՑԻ։

« ԺԷ. ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆՔ ԺԴ—ԺԸ ԴԱՐՈՒՑ։

« ԺԸ. ԻՆՆԵՒՏԱՄՆԵՐՈՐԴ ԴԱՐ։

Այս 9 հատորներից իւրաքանչիւրը քաղուած կլինի 500—700 էջերից «Դիւան»-ների դիրքով։

ՀԱՅԵՍՏՐ

ԱԶԳԱՅԻՆ—ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Լոյս կտեսնի ապրիլ ամսից

(օրաթերթը մասին կլինի առանձին յայտարարութիւն)

բաժանորդագինը 9 ամսուայ համար՝ 2 ռ. 50 կ.

Հասցէն՝ Թիֆլիս, Պոլիցէյսկ. 7

Խմբագիր՝ ԴԻՒՑ ա. ք. ԱՂԱՆԵԱՆՑ
Հրատարակիչ՝ Օր. ՆՈՒԱՐԴ ԱՂԱՆԵԱՆՑ